

ԵՐԵՒԱՅԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆԴԵՔՍ

ՀԱՅԱՍՏԱՆ

2016

ՀՀ Կառավարության ջանքերի
գնահատումը՝ ուղղված աղջիկների
և տղաների պաշտպանությանը

.....
www.childprotectionindex.org
.....

Կազմվել է ազգային, տարածաշրջանային և միջազգային
քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների
համատեղ աշխատանքի արդյունքում

ChildPact



ՆԵՆՈՒՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՕ

World Vision®

ՀՀ երեխաների պաշտպանության ցանցը (ԵՊՑ)

ազգային կոալիցիա է, որը միավորում է երեխայակենտրոն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, որոնք աշխատում են հանուն երեխաների բարօրության, ջատագո-

վում են քաղաքականության բարելավման համար և իրականացնում երեխաների պաշտպանության քաղաքականության դիտորդություն:

Երեխաների պաշտպանության ցանցի (ԵՊՑ) անդամ կազմակերպություններն են.

«Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» ՀԿ • «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն» • «Արեգունի» սոցիալական զարգացման ՀԿ • «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի նամքի հիմնադրամ • «Աստղացույց» ՀԿ • «Առավոտ» ՀԿ • «Արմինե» ՀԿ • Դպրոց-կենտրոնների միություն Երեխաների աջակցության հիմնադրամ • «Չանգակատուն» ՀԿ • «Էմմանուել» ՀԿ • «Ընտանիք և համայնք» ՀԿ • «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ • «Լույսի աշխարհ» ՀԿ • «Լիարժեք կյանք» ՀԿ • «Խարիզմա» ՀԿ • «Խարիսխ» ՀԿ • «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ • Կանանց ռեսուրսային կենտրոն • Հայաստանի մանուկներ հիմնադրամ • Համայնքային զարգացում և սոցիալական աջակցություն» ՀԿ • «Համայնքային համախորմ-

ման և աջակցության կենտրոն» ՀԿ • Հայկական Կարիտաս Հայ ժողովրդավարական ֆորում • Հյումեն դիֆինիթի ընդ փիս • ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ • Մանկական զարգացման հիմնադրամ • «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ • «Նագաշյան» երեխաների աջակցության կենտրոն • «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա • «Պարզևենք ժպիտ» ՀԿ • ՍՕՍ մանկական գյուղեր • «Սոցիալական արդարություն» ՀԿ • «Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական կենտրոն» ՀԿ • Վորլդ Վիժն Հայաստան • «Վերադարձ և պաշտպանություն» ՀԿ • «Տաթևիկ» ՀԿ • Փրոջեքթ Հարմոնի • «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ • Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ

ChildPact

ChildPact-ը տարածաշրջանային կոալիցիա է, որը միավորում է քաղաքացիական հասարակության 650 կազմակերպությունների, որոնք ջատագովում են Հարավարևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում երեխաների պաշտպանության բարեփոխումները: Հիմնադրվելով 2011թ.` ChildPact-ը կոալիցիաների կոալիցիա է, որի անդամները ԵՄ հարևանության 10 երկրներում գործող երեխայակենտրոն ԶԿ-ների ազգային ցանցեր են. www.childpact.org:

Վորլդ Վիժն միջազգային կազմակերպություն

Վորլդ Վիժն միջազգային կազմակերպությունը զարգացման և ջատագովություն իրականացնող կազմակերպություն է, որը աշխատում է երեխաների, ընտանիքների և համայնքների հետ, որպեսզի վերջիններս հաղթահարեն աղքատությունը և անարդարությունը: Վորլդ Վիժնի Միջին Արևելքի և Արևելյան Եվրոպայի գրասենյակը երեխայի պաշտպանության ինդեքսի պաշտոնական գործընկերն է. www.wvi.org/meero:

Սեպտեմբեր 2016 թ.

Երեխայի պաշտպանության ինդեքսը իրականացվել է ինը երկրներում՝ Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Բուլղարիայում, Կոսովոյում*, Հայաստանում, Մոլդովայում, Ռումինիայում, Սերբիայում և Վրաստանում: :

*Չորսերեքը կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշումների նկատմամբ որևէ կանխակալ մոտեցում և համահունչ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևին և Արդարադատության միջազգային դատարանի կարծիքին՝ Կոսովոյի կողմից անկախության հռչակման վերաբերյալ: :

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման ոչ մի մաս չի կարող վերահրապարակվել առանց համապատասխան հղումի՝ նշելով աղբյուրի անունը, գործընկերները և հրապարակման տարին: :

Հրապարակվել է Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության կողմից, ChildPact-ի և ՀՀ-ում երեխաների պաշտպանության ցանցի հետ համագործակցության արդյունքում: Սույն հրապարակման մասին լրացուցիչ տեղեկությունների կամ պատճենների համար կարող եք գրել contact@childpact.org կամ meero@wvi.org էլ. հասցեներով:

Բովանդակություն

Հապավումներ

1 Ներածություն

Հայաստանի Երեխաների պաշտպանության ցանցի նախագահի ուղերձ

«Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպություն, ծրագրի տնօրենի ուղերձ

4 Ինդեքսի մեթոդաբանությունը

9 Քաղաքականության վերաբերյալ եզրահանգումներ

Երեխայի խոցելիությունը
Կառավարում
Կանխարգելում

- Բռնության բոլոր տեսակները
- Տնտեսական շահագործում
- Սեռական շահագործում
- Թրաֆիքինգ

Խնամք և պաշտպանություն

- Հաշմանդամություն
- Ծնողներից բաժանված երեխաներ
- Կանխել բաժանումը
- Երեխաներին պահել ապահովության մեջ
- Որդեգրում
- Թափառաշրջիկություն

34 Քաղաքականության վերաբերյալ եզրահանգումներ

36 Երախտագիտություն

38 Հավելված. Ինդեքսի մեթոդաբանությունը

Հապավումներ

ԵՊՑ	Երեխաների պաշտպանության ցանց
ԸԿԵԻՊԲ	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԽՀՀ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՎԾ	Անհատական վերականգնման ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

Ներածություն

Գաղափարների և կարողությունների փոխանակման խրախուսում

Երեխաների պաշտպանության ցանցի (ԵՊՑ) հիմնական նպատակը երեխաների պաշտպանության և բարօրության զարգացումն է: Այս նպատակին հասնելու համար ԵՊՑ-ն իրականացնում է ջատագովություն և համագործակցում է կառավարության և դոնոր կազմակերպությունների հետ՝ բարեփոխելու երեխաների պաշտպանության համակարգը կարգավորող օրենսդրությունը, ընթացակարգերը և պրակտիկան:

Ութ հարևան ազգային կոալիցիայի ներկայացուցիչների հետ մենք ներկայացնում ենք երեխայի պաշտպանության ինդեքսը, որի հիման վրա գնահատվել է, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը և ութ մյուս երկրները երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով (ԵԻԿ) ստանձնած իրենց պարտավորությունները իրականացրել երեխաների պաշտպանության գործում: Ինդեքսը անկախ դիտորդական գործիք է, որն օգնում է մեզ պարբերաբար վերանայելու մեր առաջընթացը և զգուշացնում է բացթողումների մասին, որոնք կարող են մեր երեխաներին խոցելի դարձնել: Այս գործիքը նաև նպատակ է հետապնդում կարողություններ և գաղափարներ փոխանակել, որն օգնում է մեզ չչեղվելու մեր նպատակից, գործելու հանուն երեխաների՝ բոլոր աղջիկների և տղաների բարեկեցության:

Երեխաների պաշտպանության ցանցի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին, դոնոր կազմակերպություններին, փորձագետներին և անդամներին, որոնք աջակցում են ինդեքսը ներկայացնել քաղաքացիներին, որոշում կայացնողներին և քաղաքացիական հասարակությանը:



ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

.....

Հայաստանի Երեխաների
Պաշտպանության Ցանց

Երեխաների պաշտպանության համար ավելի մեծ հաշվետվողականություն

ՀՀ-ն վավերացրել է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան 1993 թ., այդ օրվանից երեխաների պաշտպանությունը և անվտանգությունը դարձել են հրատապ հարց, որը պետք է ընդգրկվի երկրի զարգացման օրակարգում: Ավելի քան 25 տարի Վորլդ Վիժն-Հայաստան կազմակերպությունը, կառավարության, քաղաքացիական հասարակության, մամուլի և դոնոր կազմակերպությունների իր գործընկերների հետ աջակցել է բոլոր այն ջանքերին, որոնք ուղղված են պաշտպանելու երկրի աղքիկներին և տղաներին բռնությունից, լքումից և արհամարհանքից:

Երեխայի պաշտպանության ինդեքսը յուրօրինակ մի գործիք է, որով գնահատվում է երկրի առաջընթացը ԵԻԿ-ով ստանձնած պարտավորությունների կատարման առումով: Այն վերլուծում է երեխաների պաշտպանության համակարգը հինգ հարթությունում՝ քաղաքականություն, ծառայությունների տրամադրում, կարողություններ, հաշվետվողականություն և համակարգում: Օգտագործելով ինդեքսի տվյալները՝ շահառուները կարող են քարտեզագրել առաջընթացը, համակարգում առկա բացերը՝ ավելի լավ բարեփոխումներ իրականացնելու և զարգացմանն ուղղված թիրախավորված միջամտություն իրականացնելու համար:

Այս տարի ՀՀ Կառավարությունը գնահատում է Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը, և արդյունքները ազդելու են երկրի հետագա ռազմավարությունը մշակելու վրա: Այսօր ՀՀ-ում գործող երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող դերակատարները պետք է միավորվեն և ազդեցություն ունենան քաղաքականություն մշակողների վրա՝ հետագա քայլերը որոշելու համար: Ահա թե ինչու կոչ ենք անում երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող դերակատարներին միավորել իրենց ձայնը և գործողությունները՝ հանուն մեր տղաների և աղքիկների ավելի բարեկեցիկ և պայծառ ապագայի:



ԺԻՐԱՅՐ ԷԴԻԼՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ՏՆՕՐԵՆ

.....

«Վորլդ Վիժն Հայաստան»
միջազգային կազմակերպություն

Ինդեքսի մեթոդաբանությունը

Երեխայի պաշտպանության ինդեքսը մշակվել է խրախուսելու տարածաշրջանային համագործակցությունը, խթանելու ԵԻԿ-ի ավելի ընդգրկուն իրականացումը և ծառայում է որպես քաղաքականության վերլուծության գործիք՝ քաղաքացիական հասարակության, կառավարության և դոնոր կազմակերպությունների համար: Ինդեքսը բաղկացած է 626 ցուցանիշներից, որոնք համընդհանուր կերպով գնահատում են պետության քաղաքականությունը և գործողությունները՝ պաշտպանելու իրենց ընդդատության տակ գտնվող աղջիկներին և տղաներին: Ինդեքսի ցուցանիշների շրջանակը հիմնականում հիմնվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հրատարակած *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ուղեցույցի* վրա: Ձեռնարկը պարունակում է «այո», «ոչ», «մասամբ կատարված» գնահատվող ստուգաթերթեր՝ ԵԻԿ-ի յուրաքանչյուր հոդվածի կարևորությունը հասկանալու համար: Ինդեքսով օգտագործվում են այս ստուգաթերթերը որպես հիմնական ցուցանիշներ՝ պետության պարտավորությունների կատարումը գնահատելու համար:

2016 թ. ինդեքսի հրատարակությունը փորձնական տարբերակ է: Այդ պատճառով ինդեքսի միավորները հիմնված են 2013 թ. ղեկտեմբերի տվյալների վրա: Այս ժամանակահատվածը թույլ տվեց, որ բոլոր ինը երկրներում հասանելի տեղեկատվությունը երկու տարվա ընթացքում հավաքվի և մշակվի: Միևնույն ժամանակ 2014 թ.-ից ձեռնարկված նոր գործողությունները նույնպես հաշվի են առնվել և վերլուծության ու առաջարկությունների մեջ հնարավորինս անդրադարձ է կատարվել:

Տե՛ս հավելվածը ինդեքսի, տվյալների հավաքման և գնահատման վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար:

Մեկ միավորը ամենաբարձրն է. որքան ցածր է միավորը, այնքան քիչ գործողություններ են իրականացվել, որքան բարձր՝ այնքան ավելի արդյունավետ գործողություններ են իրականացվել երեխաների համար:

Կառավարության կողմից ձեռնարկված գործողությունների գնահատման բաղադրիչները

Ինդեքսի միջոցով գնահատվում են կառավարության կողմից ձեռնարկված գործողությունները հինգ բաղադրիչների միջոցով՝ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի երեխաների պաշտպանությանը վերաբերող յուրաքանչյուր հոդվածի մասով: Այս հինգ բաղադրիչներն են՝ քաղաքականություն և օրենսդրություն, ծառայություններ, կարողություն, համակարգում և հաշվետվողականություն:

Քաղաքականություն և օրենսդրություն

Քաղաքականության և օրենսդրության բաղադրիչը գնահատում է պետության ջանքերը՝ քաղաքականության մշակման, օրենսդրության և կանոնակարգումների ընդունման մասով, որոնք ուղղված են պաշտպանելու բռնության ենթարկված և խոցելի երեխաներին:

Ծառայություններ

Ծառայությունների բաղադրիչը գնահատում է պետության ջանքերը՝ ծառայություններ մատուցելուն ուղղված, որոնց միջոցով աջակցություն է տրամադրվում վտանգի մեջ գտնվող, շահագործման ենթարկված կամ հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներին:

Կարողություն

Կարողության բաղադրիչը գնահատում է պետության ջանքերը՝ ռեսուրսներ, աշխատակազմ, ենթակառուցվածքներ և սարքավորումներ տրամադրելու ուղղությամբ, երեխաների պաշտպանության քաղաքականությունը պատշաճ կերպով իրականացնելու և ծառայություններ մատուցելու համար:

Համակարգում

Համակարգման բաղադրիչը գնահատում է պետության ջանքերը՝ ուղղված տարբեր նախարարությունների, գործակալությունների և գործադիր այլ մարմինների միջև արդյունավետ համագործակցությանը:

Հաշվետվողականություն

Հաշվետվողականության բաղադրիչը գնահատում է պետության ջանքերը՝ ուղղված հանրային ոլորտում իրականացված գործողությունների հաշվետվողականության ձևավորմանը և հանրային ոլորտում դերակատարների պարտականությունների սահմանմանը, այնպես, որ նրանք հստակ իմանան իրենց դերը և լիազորությունների սահմանները:

Ինդեքսի ցուցանիշներ

Ինդեքսը բաղկացած է 626 ցուցանիշներից, որոնք բաշխված են հետևյալ կերպ՝



Ինդեքսի աշխատանքային խումբը

Ազգային մակարդակում աշխատանքային խմբերը ուսումնասիրել և հավաքել են տվյալներ ինդեքսի յուրաքանչյուր ցուցանիշի գնահատման համար: Տարածաշրջանային խմբերը հավաքել են տվյալները, վերլուծել և ներկայացրել տվյալ պետության արդյունքները:

Տարածաշրջանի
աշխատանքային
խումբ՝




Ազգային
աշխատանքային
խումբ՝





Քաղաքականության վերաբերյալ եզրահանգումներ

Երեխայի խոցելիության միավորը



Երեխայի խոցելիության միավորը գնահատում է երեք հստակ բաղադրատարրեր. կենսաբանական ընտանիքից դուրս ապրող երեխաների իրավիճակը, պետական ոլորտի անձնակազմը, որը զբաղվում է խոցելի երեխաների պաշտպանությամբ, և, վերջապես, սոցիալական ապահովության պետական ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի մաս:

ՀՀ-ն ցածր միավոր ունի ինդեքսի երեխայի խոցելիություն դասակարգման մեջ՝ 0,280՝ առավելագույնը 1,0 միավորից: Համեմատության կարգով նշենք, որ Սերբիայի միավորը կազմում է 0,623, իսկ Մոլդովայինը մոտ է ՀՀ-ին՝ 0,336:


Այս միավորը բացատրվում է հետևյալ վերլուծությամբ: ՀՀ-ում ծնողներից բաժանված երեխաների 92 տոկոսը բնակվում է հաստատություններում: Այս երեխաներից 97 տոկոսը հաշմանդամություն ունեցող երեխաներ են: ՀՀ-ն սահմանափակ հնարավորություններ է առաջարկում խնամակալության և խնամատարության (ընտանիքի այլ անդամների հետ բնակեցում) տարբերակների կիրառման:

Խոցելի երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող հանրային աշխատողները (օրինակ՝ սոցիալական աշխատողները) տեղական մակարդակում սակավաթիվ են: Սակայն համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները ու ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները որոշակի փոխհատուցում են առաջարկում: Առկա տվյալների համաձայն՝ 100.000 բնակչության թվով միջինը 0,66 սոցիալական աշխատողներ են սպասարկում: Չկան մասնագիտացված դատավորներ, որոնք ի պաշտոնե մասնագիտացվել են արձագանքելու այն դեպքերին, որոնք վերաբերում են երեխայի պաշտպանությանը: Զիչ հավանական է, որ առանց մասնագիտացված դատավորների դատական ընթացակարգերը և արդյունքները համահունչ կլինեն ԵԻԿ-ի պահանջներին:

ՀՀ-ն ծախսում է տարեկան ՀՆԱ-ի մոտ երեք տոկոսը (2,9 տոկոսը) սոցիալական պաշտպանության համար: Համեմատության համար նշենք, որ Սերբիայի սոցիալական պաշտպանության քլուջեն կազմում է ՀՆԱ-ի 21 տոկոսը:

Առաջարկվում է, որ ՀՀ-ն վերանայի հաստատությունների բեռնաթափումը՝ ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող երեխաներին: Ավելի մեծ ջանքեր է պետք գործադրել հաշմանդամություն ունեցող երեխաների համար հաստատություններին այլընտրանքային խնամքի տարբերակներ ներմուծելու համար, ինչը պետք է նախորդի հաստատությունների բեռնաթափմանը: Առաջնային ծառայությունները, որոնք կանխում են հաստատություն առաջին անգամ մուտք գործելը, կարող են ռազմավարական միջոց հանդիսանալ համակարգը վերակազմակերպելու համար: Այլընտրանքային խնամքի տարբերակները, խնամատարությունը և խնամակալությունը պետք է զարգացնել: Նաև անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հանրային ոլորտի աշխատակիցների կարողությունները ամրապնդելու համար:

Կառավարման միավորը



ՀՀ-ն «կառավարման միջավայրը» կարգում լավ կատարող է: ՀՀ միավորը կազմում է 0,713՝ առավելագույնը 1,0 միավորից, և Հայաստանը երկրորդ տեղն է զբաղեցնում ինդեքսի ինը երկրների շարքում: Ռումինիան առաջին տեղում է 0,742 միավորով, իսկ Ալբանիան երրորդ տեղում՝ 0,704 միավորով: Այս միավորը արտահայտում է երեխաների պաշտպանությանը վերաբերող ՀՀ օրինաստեղծ և կիրարկման մեխանիզմները:

Ընդհանուր առմամբ, կառավարումը վերաբերում է օրինաստեղծ և կիրարկման ընթացքին, և ինդեքսը ուսումնասիրում է՝ արդյո՞ք կառավարությունը ԵԻԿ-ի իրականացման ընթացքում պահպանել է լավ կառավարման սկզբունքները: Լավ կառավարումը խրախուսում է քաղաքացիների իրավունքները, ապահովում է տեղեկատվության թափանցիկ հասանելիությունը, հիմնվում է հետևողական որոշումների կայացման, օրենքի գերակայության վրա և խթանում է հանրային օգուտի առաջընթացը¹:

Միավորով գնահատվել է երեխաների պաշտպանությանը վերաբերող օրենքների առկայությունը և պետական կառույցները, որոնք լիազորված են պաշտպանել երեխայի իրավունքները և դիտորդություն իրականացնել: ՀՀ-ն ընդունել է երեխայի իրավունքների վերաբերյալ համապարփակ օրենք² 1996 թ., որով նախատեսվում են հանրային ոլորտի գործողություններ, և օրենքով ամրագրվում է, որ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը գերակա են ներպետական իրավական ակտերի նկատմամբ՝ երաշխավորելով Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի առաջնայնությունը: Իրավունքների պաշտպանությունը (և կիրարկումը) կազմակերպվում է մի շարք կարևոր մարմինների միջոցով՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի և երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի, որում ընդգրկված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Առաջարկվում է, որ Հայաստանը ամրապնդի համապատասխան մարմինների գործունեությունը, որպեսզի ավելի արդյունավետ իրականացնի որդեգրած քաղաքականությունը մանրամասն մոնիթորինգ իրականացնելու և հետագա գործողություններ ձեռնարկելու միջոցով:

Լավ կառավարման մեկ այլ տարրը պահանջում է, որ տեղեկատվությունը թափանցիկ կերպով հասանելի լինի: Տեղեկատվության հասանելիությունը հնարավորություն է տալիս բոլոր շահագրգիռ կողմերին արդյունավետորեն նպաստել բարեփոխումների ընթացքին: Հանրային ոլորտում տեղեկատվության թափանցիկությունը ապահովում է հավաստիություն և ավելի մեծ հաշվետվողականություն:

Երեխայի պաշտպանության համակարգի շահառուների համար պաշտոնական ընթացակարգերի առկայությունը ավելացնում է հաշվետվողականությունը այն դեպքում, երբ «արձանագրված» փաստաթղթերը նվազեցնում են կոռուպցիայի հավանականությունը կամ իրական աջակցության բացակայությունը: Օրենսդիր մարմնի համար թարմացված տեղեկությունը և երեխաների պաշտպանության ամենօրյա ինդիկատորների վերաբերյալ լիարժեք պատկերացումը թույլ կտան ավելի արդյունավետ օրենսդրություն մշակել և բարձրացնել հանրային ոլորտի հաշվետվողականությունը օրենքի առջև:

Ներկայումս Մարդու իրավունքների պաշտպանի³ գրասենյակը օրենքով լիազորված չէ մարդու իրավունքների վերաբերյալ բողոքներ քննել: Առանց քննություն իրականացնելու լիազորության ՄԻՊ-ը պետք է հիմնվի նման գործառույթ իրականացնող այլ մարմինների վրա: Քննչական մարմինները պետք է կառավարությունից անկախ գործեն, որպեսզի կողմնակալությունից և քաղաքական դրդապատճառներից խուսափեն: Նման գործառույթունը կավելացնի տեղեկության հասանելիությունը և վերլուծությունը:

Երեխայի իրավունքների կիրակումը պետք է ներառի ԶԶ երեխաների մասնակցությունը: Ներկայումս չկա որևէ մեխանիզմ, որը թույլ կտա երեխաներին ներգրավել քաղաքականության մշակման և երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ քննարկումներին: Առաջարկվում է, որ ԶԶ-ն ընթացակարգ մշակի, որով երեխաները կընդգրկվեն երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում, ինչպես նաև հարթակ ձևավորվի երեխաներին ԶԶ Ազգային ժողովի առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովում ներգրավելու համար:

Վերջապես, ԶԶ-ն պետք է երեխայի պաշտպանությանը հատկացվող բյուջեի վերլուծություն իրականացնի ազգային և տեղական մակարդակներում: Առանց բյուջեի մանրամասն և պարբերական վերանայման բարդ է հստակ ազդեցություն ունեցող որոշումներ կայացնել ֆինանսավորման և հարցի կարևորության վերաբերյալ: Առաջարկվում է, որ ԶԶ-ն ընթացակարգ մշակի երեխաների հարցերին վերաբերող բյուջեի հատկացումների համամասնությունը գնահատելու համար և կառուցակարգեր մշակի կառավարության գործողությունների ազդեցությունը բյուջեի վրա վերլուծելու համար: Վերլուծությունը պետք է ընդգրկի հետևյալ հարցերը. տարբեր մարզերում և երեխաների կոկրետ խմբերին հատկացվող բյուջեի անհամաչափ բաշխումը: Այս վերլուծությունը պետք է տարանջատված տվյալներ պարունակի, որով հնարավոր կլինի որոշել, թե արդյոք և ինչպես է ԶԶ-ի բյուջեի բաշխումը հասանելի դառնում երեխաների ամենախոցելի խմբերին, և արդյո՞ք նման ֆինանսավորումը համահունչ է ԵԻԿ-ով ստանձնած պարտավորություններին:


Բռնության և չարաշահման կանխարգելման միավորներ

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ	.34
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	.38
ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	.49
ԹՐԱՖԻԻԿ	.52
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ	.28

Կառավարության գործողությունները աղջիկների և տղաների նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման ուղղությամբ պետք է հակադրեն ընտանեկան բռնությանը և լքմանը, տնտեսական (աշխատանք), սեռական շահագործմանը և թրաֆիքինգին: Կառավարությունը և համապատասխան մարմինները բոլոր մակարդակներում կարևոր նշանակություն ունեն բռնության դեպքերը արդյունավետորեն **հայտնաբերելու**, պատշաճ կարգով **հաղորդելու** և քննություն իրականացնելու, զոհերին վերականգնողական ծառայություններ **ուղղորդելու և նման ծառայությունները** լիարժեքորեն գործի դնելու գործառնություններ իրականացնելու գործում:

Բռնությանն առնչվող բոլոր խնդիրների համեմատության մեջ ՀՀ-ն ամենաբարձր միավորն ունի թրաֆիքինգի և առևանգումների դեմ պայքարում: ՀՀ-ն նաև առաջնային գործողություններ է ձեռնարկում սեռական բռնությունների կանխարգելման և վերացման ուղղությամբ: Ընտանեկան բռնության և երեխայի աշխատանքի կանխարգելմանն ու վերացմանն ուղղված գործողությունները մտում են սահմանափակ:


Բռնության բոլոր տեսակները



ԵԻԿ-ի 19-րդ հոդվածով նախատեսված բռնության բոլոր տեսակների ընդգրկման առումով ՀՀ-ն ցածր ցուցանիշ ունի՝ 0,339 միավոր՝ առավելագույնը 1,0 միավորից: Բոսնիա և Հերցեգովինայի ցուցանիշը մոտ է ՀՀ-ին՝ 0,385 միավոր, իսկ Ռումինիայինը ամենաբարձրն է՝ 0,800: «Բռնության բոլոր տեսակները» եզրույթը նշված հոդվածի համաձայն սահմանվում է որպես ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, մարմնական պատիժ և որևէ այլ տեսակի դաժան կամ նվաստացնող վերաբերմունք ցանկացած համատեքստում:

Ինդեքսը գնահատում է կառավարության գործողության հինգ բաղադրիչները ԵԻԿ-ի երեխայի պաշտպանության մասին յուրաքանչյուր հոդվածի կիրարկման առումով: Այս հինգ բաղադրիչներն են. քաղաքականություն և օրենսդրություն, ծառայություններ, կարողություն, համակարգում և հաշվետվողականություն:

Քաղաքականության և օրենսդրության բաղադրիչի գնահատումը ցույց է տալիս ՀՀ ջանքերը՝ ուղղված քաղաքականության, օրենսդրության և ընթացակարգերի մշակմանը, որոնց հիման վրա երեխան պաշտպանվում է բռնության բոլոր տեսակներից: **Ծառայությունների** բաղադրիչը գնահատում է ՀՀ ջանքերը՝ ուղղված ծառայությունների տրամադրմանը, որոնց օգնությամբ երեխան պաշտպանվում է բռնությունից և վերջ է դրվում բռնության հայտնաբերված դեպքերին: **Կարողությունների** բաղադրիչը գնահատում է ՀՀ ջանքերը՝ ուղղված ռեսուրսների, աշխատակազմի, ենթակառուցվածքների և սարքավորումների տրամադրմանը՝ բռնությունը կանխարգելելու և վերացնելու համար: **Համակարգման** բաղադրիչը գնահատում է տարբեր նախարարությունների, գործակալությունների և այլ կառույցների միջև արդյունավետորեն համակարգում իրականացնելու ՀՀ կարողությունը: Վերջապես, **հաշվետվողականության** բաղադրիչը գնահատում է ՀՀ ջանքերը՝ հանրային ոլորտի գործողությունների հաշվետվողականությանն ուղղված, ինչպես նաև հանրային մարմինների պարտականությունների սահմանումը, այնպես որ համապատասխան դերակատարներն իմանան իրենց լիազորությունները և պարտավորությունների սահմանները:



ՀՀ-ն սահմանափակ գործողություններ է իրականացնում երեխաների նկատմամբ բռնությունների դեպքերի հայտնաբերման և հաղորդման վերաբերյալ: Բռնությունների վերացմանն ուղղված գնահատման բոլոր վերոգրյալ բաղադրիչների մեջ համեմատական կարգով առանձնանում է իրավական համակարգը որպես ավելի առաջադեմ ոլորտ՝ կազմելով առավելագույնը 1,0 միավորից՝ 0,412 միավոր: Բռնությունների վերացմանն ուղղված ծառայությունների միավորը կազմում է 0,300, մինչդեռ կարողությունները կազմում են 0,125: Հաշվետվողականությունը և համակարգումը, համապատասխանաբար, կազմում են 0,325 և 0,500 միավոր:

ՀՀ օրենսդրության և քաղաքականության միավորը ցույց է տալիս, որ սահմանափակ գործողություններ են ձեռնարկվում ՀՀ-ի կողմից՝ ապահովելու կառուցակարգեր, որոնց միջոցով հայտնաբերվում, հաղորդվում, ուղղորդվում և գործի են դրվում ծառայություններ՝ ուղղված աղջիկների և տղաների նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ու վերացմանը: Չնայած ՀՀ օրենսդրությունը նախատեսում է քրեական պատասխանատվություն երեխաների նկատմամբ բռնությունների համար, սակայն չկան հստակ մեխանիզմներ այդ բռնությունների դեպքերը հայտնաբերելու համար, բացառությամբ թրաֆիքինգի դեպքերի: **Առաջարկվում է, որ ՀՀ-ն ակտիվորեն նոր միջոցներ նախատեսի**

բռնությունների դեպքերի հաղորդման համար, և պարտականություն դրվի երեխայի պաշտպանությամբ զբաղվող տեղական, մարզային աշխատակազմերի, ինչպես նաև դպրոցներում համապատասխան մասնագետների վրա՝ հայտնաբերելու և հաղորդելու բռնությունների դեպքերի մասին: Առանց նման դեպքերի հայտնաբերման և հաղորդման համար նախատեսված հասանելի և հայտնի կառույցների, ՀՀ-ն չի կարող երաշխավորել, որ բռնությունների ենթարկվող երեխաները կդիմեն ոստիկանության: Դեպքերի մասին հաղորդումը պետք է պարտադիր լինի որոշ մասնագետների, ներառյալ ուսուցիչների, սոցիալական աշխատողների և ոստիկանության համար: Երեխաների համար հասանելի մեխանիզմներ Նույնպես անհրաժեշտ է ներդրվեն համայնքներում՝ դեպքերի մասին հաղորդումը խրախուսելու համար: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը բավարար դյուրին հասանելի միջոցներ չի առաջարկում երեխաների համար, որ նման իրավիճակներում դիմեն:

Դեռևս չկան օրենսդրական բավարար հիմքեր, որ տեղական և մարզային սոցիալական աշխատողները, ներառյալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (ԽՀՀ) և երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժինները ակտիվորեն հայտնաբերեն և հաղորդեն բռնությունների դեպքերի մասին: Նրանք միայն լիազորված են միջամտել և կառավարել այն դեպքերը, որոնց մասին նրանց արդեն հաղորդել են: 2014 թ.-ից կառավարությունը դեպքերի վարման ընթացակարգ է ներդրել դեպքերին հետևելու և դեպի ծառայություններ ուղղորդելու համար: Որպես հաջորդ քայլ՝ անհրաժեշտ է, որ տեղական և մարզային աշխատակազմերը վերապատրաստումներ անցնեն՝ այս կարգերն ավելի ակտիվորեն կիրառելու համար⁴: Անհրաժեշտ է նաև սոցիալական աշխատանքի վերապատրաստում անցած լրացուցիչ աշխատողների հաստիքներ ստեղծել՝ ավելի լիարժեք ուղղորդման և դեպքերի կառավարման պրակտիկա ստեղծելու համար:


Այն դեպքում, երբ բռնության դեպքերը հայտնաբերվում են և հաղորդում ներկայացվում, կառավարությունները ԵԻԿ-ով ստանձնած պարտավորությունների համաձայն պետք է առաջարկեն ծառայություններ բռնության դեպքերին վերջ դնելու համար: ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսվում այս դեպքերում: Տուժողների վերականգնումը նույնպես կառավարության աջակցության բաղկացուցիչ մաս է: ՀՀ-ում քիչ թվով ծառայություններ կան, որոնք արձագանքում են ընտանեկան և այլ տեսակի բռնությունների ենթարկված երեխաների խնդիրներին: ՀՀ-ում առկա է մեկ վերականգնողական կենտրոն ընտանեկան բռնության ենթարկված տուժողների համար այն պայմանով, որ երեխայի հետ այնտեղ բնակվի նաև իր ծնողը: Առանց ծնողի ուղեկցման ՀՀ-ում երեխաները կարող են բնակվել հաստատությունում: Զանի որ այլընտրանքային ընտանիքահեն խնամքը նախընտրելի է կենսաբանական ընտանիքներից անջատված երեխաների համար, առաջարկվում է, որ ՀՀ-ն և՛ խնամակալությունը, և՛ խնամատարությունը զարգացնի որպես հաստատություններին պոտենցիալ այլընտրանք՝ երեխաների՝ բռնությունների ենթարկվելու դեպքում: ՀՀ-ում քիչ թվով հաստատություններ կան, որոնք աշխատակազմը վերապատրաստված է կամ բավարար փորձառություն ունի բռնությունների ենթարկված երեխաների հետ աշխատելու համար: ՀՀ-ում առկա են միայն երեք պետական ցերեկային խնամքի հաստատություններ, որոնք տրամադրում են հոգեբանասոցիալական աջակցություն և խորհրդատվություն⁵: Տեղում հասանելի և մասնագիտացված պատշաճ ծառայություններ պետք է տրամադրվեն և համակարգվեն բռնության ենթարկված երեխաների համար:

Նման ծառայություններ ստեղծելու համար (ինչպես, օրինակ՝ խորհրդատվու-

թյուն, հոգեբանասոցիալական, շտապ արձագանքման խնամատար ընտանիքներ, երկարաժամկետ խնամատարություն և խնամակալություն) առաջարկվում է, որ ՀՀ-ն ստեղծի և գործի դևի որակի և ֆինանսական չափորոշիչներ՝ նման ծառայությունները կառավարելու համար: Պետական և մասնավոր ծառայությունների լիցենզավորումը նույնպես հնարավորություն կտա կիրառելու այս չափորոշիչները և պատշաճ դիտարկում իրականացնելու դրանց կատարման որակի նկատմամբ: Կարճաժամկետ կտրվածքով առաջարկվում է, որ ՀՀ-ն լիցենզավորման պահանջ դնի բոլոր հաստատությունների, ցերեկային խնամքի կենտրոնների և այլ խնամքի հաստատությունների վրա: Նման չափորոշիչների միջոցով հնարավոր է սահմանել կարողությունների անհրաժեշտ մակարդակը (աշխատակազմ, ռեսուրսներ, սարքավորում) երեխայի պաշտպանությանը պատշաճ և մասնագիտական մոտեցում ցուցաբերելու համար:

Վերջապես, քանի որ բռնության դեպքերի **հայտնաբերման, հաղորդման, ուղղորդման և պատշաճ արձագանքման** համար անհրաժեշտ է, որ համայնքը հասկանա բռնության տարածվածությունը, ընտանեկան բռնության և այլ տեսակի բռնությունների մասին քարոզչական աշխատանքներ պետք է իրականացվեն: ՀՀ կառավարությունը նախկինում աջակցել կամ դրական է վերաբերվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացվող երեխայի իրավունքների և ընտանեկան բռնության վերաբերյալ քարոզարշավներին: Լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ հավաքելու տվյալներ համապատասխան քաղաքականություն և պրակտիկա ձևավորելու համար: Առաջարկվում է, որ ՀՀ-ն առաջնային դարձնի հետազոտությունները կամ ազգային ուսումնասիրությունները ընտանեկան բռնության վերաբերյալ՝ տվյալները տարանջատելով ըստ սեռի, տարիքի, հաշմանդամության: Թեև միջազգային կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը որոշ հետազոտություններ իրականացրել է, սակայն կառավարության կողմից ազգային մակարդակում իրականացված ուսումնասիրությունը և վերլուծությունը կարող են կարևոր տվյալներ ներկայացնել, որոնց հիման վրա ավելի արդյունավետ քաղաքականություն կմշակվի:

Տնտեսական շահագործում




ԵԻԿ-ի 32-րդ հոդվածով արգելվում է երեխայի աշխատանքը, որը կարող է խոչընդոտել կրթությունն ստանալուն և վտանգավոր է կամ վնասում է երեխայի զարգացմանը: Սույն հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները սահմանեն աշխատանքի ընդունման նվազագույն տարիք, որոշեն աշխատանքային օրվա տևողության և աշխատանքային պայմաններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արդյունավետ իրականացումն ապահովելու համար կիրարկման մեխանիզմներ ընդունեն՝ երաշխավորելու բոլոր պոտենցիալ դերակատարների կողմից դրանց պահպանումը:

ՀՀ ցուցանիշը 0,381 միավոր է՝ առավելագույնը 1,0 միավորից: Սա ամենավատ արդյունքն է ինդեքսի ինը երկրների շարքում երեխայի աշխատանքը արգելելուն ուղղված քայլեր ձեռնարկելու մասով: ՀՀ միավորին ամենամոտը Վրաստանի ցուցանիշն է (0,412):

32-րդ հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները կանխարգելեն երեխաների աշխատանքի շահագործումը: Ինդեքսը երեխաների տնտեսական շահագործման ենթարկվելու մասով համեմատում է կառավարության կողմից իրականացված գործողությունները հինգ բաղադրիչների հիման վրա՝ քաղաքականություն, ծառայություններ, կարողություն, համակարգում և հաշվետվողականություն: ՀՀ ամենաբարձր ցուցանիշը երեխայի աշխատանքի շահագործումից պաշտպանելու մասով վերաբերում է օրենսդրությանը և քաղաքականությանը (0,615): Մյուս բոլոր բաղադրիչների դեպքում իրականացված գործողությունները զգալիորեն սահմանափակ են՝ ծառայություններ (0,083), կարողություն (0,333), համակարգում (0,300) և հաշվետվողականություն (0,211):

ՀՀ-ն համեմատաբար բարձր միավոր ունի օրենսդրության և քաղաքականության ցուցանիշի բաղադրիչի մասով, մասամբ այն պատճառով, որ այն որպես առաջին քայլ վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Երեխայի աշխատանքի վերաբերյալ կոնվենցիաները՝ երեխաներին տնտեսական շահագործումից պաշտպանելու համար: ՀՀ ներպետական օրենսդրությամբ հստակ չէ, թե ինչպես են երեխայի աշխատանքի վերաբերյալ սահմանումները համապատասխանում ԱՄԿ պահանջներին: Առաջարկվում է, որ ՀՀ-ն երեխայի աշխատանքի «վատթարագույն ձևերը» ներպետական օրենսդրությամբ սահմանի, և լիովին արտացոլի այն տեսակի աշխատանքի արգելքը, որը կարող է խոչընդոտել կրթությունն ստանալուն և վնասում է երեխայի առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

ՀՀ օրենսդրությամբ քրեականացվում են երեխաների մուրացկանությունը և նաև այն գործողությունները, որոնք խախտում են երեխայի աշխատանքի վերաբերյալ օրենսդրությունը, սակայն չկան մեխանիզմներ հայտնաբերելու այն մարդկանց, ովքեր խախտել են այդ նորմերը: Երեխայի աշխատանքի համար պատասխանատվություն ունեցող անձանց չհայտնաբերելու դեպքում հետապնդումներ չեն կարող հարուցվել: Ընդհանուր պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել գործատուների նկատմամբ, ովքեր խախտել են աշխատանքային օրենսդրության ցանկացած նորմ, ինչը կարող է թույլ տալ նաև երեխայի աշխատանքի դեպքերի համար պատասխանատվության ենթարկել: Սակայն հատուկ երեխայի աշխատանքի խախտումների համար հստակ պատասխանատվության միջոցներ չնախատեսելու պարագայում մեղավոր



անձինք կարող են պատասխանատվության չենթարկվել:

Երեխայի աշխատանքի կանխարգելմանն ու վերացմանն ուղղված ծառայությունների միավորը համեմատաբար ցածր է հետևյալ պատճառներով: Աշխատանքի պետական տեսչությունը աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման, ներառյալ երեխայի աշխատանքի ստուգումներ իրականացնելու լիազորություն այլևս չունի⁷: Առանց նման լիազորության ՀՀ-ն միջոցներ չունի երեխայի աշխատանքի դեպքերի բացահայտման համար: Այս տեսչության բացակայության պարագայում ոստիկանությունը և հարկային մարմինները պետք է երեխայի աշխատանքի զանգատներ քննեն, սակայն մինչ օրս նման բողոքներ կամ ստուգումներ չեն արձանագրվել: Չկան երեխայի համար հասանելի բողոքարկման մեխանիզմներ, որոնք թույլ կտան, որ երեխաները անձամբ դիմեն:

Առաջարկվում է, որ ՀՀ-ն մշակի հեշտությամբ հասանելի բողոքարկման մեխանիզմներ երեխաների և համայնքի անդամների համար և նորից անցկացնի աշխատանքի ստուգումներ երեխայի աշխատանքի դեպքերի հաղորդման և հայտնաբերման ուղղությամբ՝ ստեղծելով ազգային մեխանիզմ: Գործատուների և կառավարության միջև համատեղ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ համակարգելու, խորհրդակցելու և բարձրացնելու համայնքի տեղեկացվածությունը տնտեսական շահագործման վերաբերյալ, ինչի արդյունքում կարող են նվազել նման դեպքերը:



Այն դեպքում, երբ պետական մարմինները հայտնաբերում են երեխայի աշխատանքի դեպքեր, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները լիազորված են կառավարելու տուժողների կարիքները: Ինչպես ընտանեկան բռնության դեպքերում, այնպես էլ տնտեսական շահագործման ենթարկված տուժողների համար քիչ թվով ծառայություններ կան, որոնք տրամադրում են հոգեբանասոցիալական աջակցություն և խորհրդատվություն: Տնտեսական շահագործման ենթարկվելու պատճառով ծնողներից բաժանված երեխաների համար քիչ թվով այլընտրանքային համայնքահեն ինսամբի տարբերակներ կան: Ամենայն հավանականությամբ այս երեխաները կհայտնվեն հաստատությունում:

Հաշվի առնելով տվյալների բացակայությունը՝ որպես հաջորդ քայլ անհրաժեշտ է հետազոտություն իրականացնել երեխայի աշխատանքի վերաբերյալ, հավաքված տվյալները պետք է տարանջատվեն ըստ սեռի, տարիքի և հաշմանդամության:

թյունները սահմանափակ են: Չկան մեխանիզմներ սեռական շահագործման դեպքերը բացահայտելու համար: Կան որոշ մեխանիզմներ թրաֆիքինգի որոշ դեպքերի համար, սակայն օրենսդրական բաց է առկա, քանի որ սեռական շահագործման ոչ բոլոր դեպքերն են պարունակում թրաֆիքինգի տարրեր: Առաջարկվում է, որ ՀՀ-ն երեխաների համար հասանելի հաղորդման մեխանիզմներ ստեղծի, որոնք թույլ կտան երեխաներին անձամբ դիմել գաղտնիության պահպանման մթնոլորտում: Բողոքարկման մեխանիզմներ են անհրաժեշտ դպրոցներում, ոստիկանությունում և տեղական մակարդակում սոցիալական աշխատանք իրականացնող մասնագետների մոտ (ԽՀՀ և ԸԿԵԻՊԲ): Կենտրոնացած ազգային մակարդակում թե՛ գիծը (մի շարք թե՛ գծեր են ներկայումս գործում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից), ազգային և համայնքային մակարդակում հանրային իրազեկման աշխատանքները կարող էին ելք առաջարկել երեխաների նկատմամբ բռնությունների գանգատների և աջակցության համար:

ՀՀ-ում տեղի ունեցող ընթացիկ սոցիալական բարեփոխումները ենթադրում են, որ լրացուցիչ սոցիալական աշխատանք պետք է իրականացվի դեպքերի մասին հաղորդելու, երեխաներին հայտնաբերելու, վերականգնողական ծառայություններ ուղղորդելու ուղղությամբ: Եռաստիճան համակարգը, մեկ անգամ լիարժեքորեն իրականացվելու և համապատասխան ռեսուրսներով հագեցված լինելու դեպքում, ներուժ ունի օգտագործելու դեպքի կառավարման միջոցները խոցելի երեխաներին ծառայություններ ուղղորդելու, ինչպես նաև հետագայում խնամքի և վերականգնողական աշխատանքների վերահսկողությունն իրականացնելու համար: Ուղղորդման մեխանիզմներ ստեղծելուն ուղղված ՀՀ նոր ջանքերի հետ մեկտեղ, պետք է գործի դրվեն անհրաժեշտ հատուկ ծառայություններ և ընթացակարգեր: Զայլեր պետք է ձեռնարկվեն արդյունավետորեն իրականացնելու առկա եռաստիճան համակարգի և այլ կարևոր մարմինների՝ ոստիկանության, դատախազության, դպրոցների, ծառայություններ տրամադրողների միջև համակարգման ուղղությամբ: Համակարգման կարգերը, որոնց համաձայն պատասխանատվություն է դրվում և հաշվետվողականության միջոցներ ձեռնարկվում, նույնպես հաջողության հասնելու համար կարևոր տարրեր են: Մինչ օրս ՀՀ-ում կան տարատեսակ ծառայություններ, որոնք նախատեսված են ավելի ընդհանրական դեպքերում՝ ընտանեկան բռնությունների կամ թրաֆիքինգի համար, բայց ոչ հատուկ՝ սեռական շահագործման ենթարկված երեխաների համար: Չնայած սպասելի են որոշ համընկնումներ, ուշադրություն պետք է դարձնել այս երեխաների հատուկ կարիքներին և վերականգնման ընթացակարգերին: Զանի որ այս երեխաների կարիքները առանձնահատուկ են և խրթին, առաջարկվում է, որ ՀՀ-ն պետական և ոչ պետական ծառայությունների ցանց ստեղծի, որոնք ունեն մասնագիտացված և փորձառու աշխատակազմ՝ երեխաների հետ վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

Թրաֆիքինգ



ԵԻԿ-ի 35-րդ հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները պաշտպանեն երեխաներին առևանգումից, վաճառքից կամ թրաֆիքինգից: Մասնակից պետությունները պետք է ծեռնարկեն բոլոր անհրաժեշտ գործողությունները, ներառյալ այլ մասնակից պետությունների հետ համատեղ գործողությունները, նման շահագործման կանխարգելման համար:

ՀՀ միավորը կազմում է 0,519՝ առավելագույնը 1,0 միավորից, և ՀՀ-ն զբաղեցնում է ինդեքսի ինը պետությունների շարքում ութերորդ տեղը երեխաներին առևանգումից, վաճառքից կամ թրաֆիքինգից պաշտպանելու մասով: ՀՀ միավորը ամենամոտն է Կոսովոյին (0,529) և Բոսնիային (0,506):

Ինդեքսով համեմատական է անցկացվում երեխաների առևանգումների, վաճառքի և թրաֆիքինգի կանխարգելմանը և վերացմանն ուղղված կառավարության գործողությունների հինգ բաղադրիչների միջև՝ քաղաքականություն, ծառայություններ, կարողություն, համակարգում, հաշվետվողականություն: ՀՀ օրենսդրության և քաղաքականության միավորը բարձր է (0,660), իսկ ծառայությունների միավորը՝ ավելի բարձր (0,700): Կառավարության գործողության կարևոր բաղադրիչ է նաև համակարգումը, որի միավորը կազմում է 0,800: Միջնորդ կարողության և հաշվետվողականության միավորները ցածր են՝ 0,375 և 0,294 համապատասխանաբար: ՀՀ ջանքերը թրաֆիքինգի դեմ գլոբալ պայքարին ուղղված կարող են պայմանավորված լինել այս խնդրի վրա համընդհանուր կենտրոնացմամբ և դոնորների հետաքրքրությամբ:

Չնայած թրաֆիքինգի հարցում ՀՀ օրենսդրության և քաղաքականության միավորը ամենաբարձրը չէ, սակայն այն բավականին դրական է: ՀՀ-ն վավերացրել է բոլոր Նոր միջազգային պայմանագրերը՝ անձանց առևանգման, առուվաճառքի և թրաֆիքինգի մասին¹¹, սակայն դեռևս պետք է ստորագրի և վավերացնի Ստրկության, ստրուկների առուվաճառքի և ստրկության նման ինստիտուտների և պրակտիկայի վերացման մասին լրացուցիչ կոնվենցիան (1956) և Անձանց թրաֆիքինգի և մարմնավաճառության արգելման մասին կոնվենցիան (1949): Այս կոնվենցիաները կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանցով սահմանվում են ստրկությունը և հարկադիր աշխատանքը: ՀՀ օրենսդրությունը պետք է այս միջազգային պարտավորությունները ընդգրկի ներպետական օրենսդրությունում¹²:

ՀՀ ծառայությունների միավորը ամենաբարձրն է: Սակայն հայտնաբերման և հաղորդման շատ քիչ մեխանիզմներ կան ՀՀ-ում, որոնց միջոցով հնարավոր է կորած երեխաներին արձանագրել, քիչ են նաև թեժ գծերը, որոնց միջոցով կարելի է երեխաներին գտնել: Քաղաքացիական հասարակության կողմից ներկայումս գործող թեժ գծերը պետք է գնահատվեն համայնքներում դրանց մասին տեղեկացվածության և կառավարության կողմից ֆինանսավորման առումով:



Թրաֆիքինգի և ստրկության ենթարկված երեխաների համար առկա են ուղղորդման մեխանիզմներ, որոնք արձանագրում են գործողությունները և վերականգնումը¹³: Ոստիկանությունը այն հիմնական մարմինն է, որն իրականացնում է քննություն և հետապնդում¹⁴: Չնայած պետությունը թրաֆիքինգի զրհերին ուղղակիորեն չի տրամադրում ծառայություններ, այն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ֆինանսավորում է առաջարկում վերականգնման ծառայությունների աշխատակազմի դասընթացների և փորձա-

ռուբլայան փոխանակման համար: Թրաֆիքինգի միջազգային դեպքերը վարում են իրավապահ մարմինները, որոնք պահպանում են միջազգային համագործակցության պայմանագրերը, որով աջակցություն է տրամադրվում հյուպատոսարանների միջոցով, ինչպես նաև համագործակցում են քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների հետ:

ՀՀ-ն ստեղծել է համակարգման խորհուրդ, որը զբաղվում է թրաֆիքինգի զոհերի գործերի վարմամբ և ծառայությունների տրամադրմամբ: Աջակցությունը ներառում է առաջնային բուժօգնությունը և այլ հրատապ խնամքի հարցեր, ժամանակավոր կացարաններ և հոգեբանական աջակցություն և, վերջապես, մասնագիտական դասընթացներ և ֆինանսական աջակցություն: **Քանի որ այս ծառայությունների մեծ մասը առաջարկվում է կառավարության աջակցությամբ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով, անհրաժեշտ է ստեղծել որակի և ֆինանսավորման չափորոշիչներ՝ ծառայությունները կարգավորելու համար, ինչը թույլ կտա նաև բարձրացնել հաշվետվողականությունը և դիտարկումներ իրականացնել: Անկախ այն հանգամանքից՝ ծառայությունները մասնավոր են, թե՛ հանրային, դրանք պետք է գործեն լիցենզիայի հիման վրա, և լիցենզիաները պետք է պարբերաբար վերանայվեն չափորոշիչների համապատասխան:**

Այս ոլորտում ՀՀ ամենացածր ցուցանիշը համակարգմանն է վերաբերում: Տարբեր մակարդակներում գործում են համակարգման մարմիններ, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով ազգային խորհուրդը լիազորված է կառավարելու թրաֆիքինգի պայքարի համար գործող տարբեր շահագրգիռ կողմերից կազմված աշխատանքային խումբը¹⁵: Սակայն սոցիալական ծառայությունները ընդգրկված չեն: Քաղաքականություն մշակող և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (չնայած ֆինանսավորվում են կառավարության և դոնոր կազմակերպությունների կողմից) թրաֆիքինգի դեմ պայքարի նախաձեռնությունների և տուժողների վերականգնման հիմնական դերակատարներն են: Առանց տեղական և մարզային մակարդակում գործող սոցիալական ծառայությունների, որոնք ստանդարտացված ուղղորդման և արձագանքման մեխանիզմներ են գործի դնում, թրաֆիքինգի զոհերի պաշտպանության ու ապաստարանին ուղղված գործողությունները կարող են սահմանափակ լինել:

Հաշմանդամություն



ԵԻԿ-ի 23-րդ հոդվածով նախատեսվում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ կարիք են ունենում լրացուցիչ ռեսուրսների և խնամքի՝ լիարժեք և արժանավայել կյանք վարելու համար: Այսպիսով, 23-րդ հոդվածը հատուկ պարտականություն է սահմանում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների պաշտպանությունը և բարեկեցությունը խթանելու համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանության հարցում ՀՀ միավորը կազմում է 0,445՝ առավելագույնը 1,0 միավորից: ՀՀ-ն այս առումով մոտ է Վրաստանին և Սերբիային, որոնց միավորները, համապատասխանաբար, կազմում են 0,433 և 0,490՝ առավելագույնը 1,0 միավորից: Ընդհանուր առմամբ ՀՀ-ն զբաղեցնում է վեցերորդ տեղը՝ ինդեքսի ինը երկրների շարքում:

ԵԻԿ-ի 23-րդ հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները պաշտպանեն հաշմանդամություն ունեցող երեխաներին որպես երեխաների հատուկ խմբի, որը կարիք ունի յուրահատուկ և/կամ լրացուցիչ պաշտպանության այլ երեխաներին հավասար բարեկեցության մակարդակին հասնելու համար: Ինդեքսը համեմատում է կառավարության կողմից իրականացված գործողությունները, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող երեխաներին հինգ բաղադրիչների հիման վրա՝ քաղաքականություն, ծառայություններ, կարողություն, համակարգում և հաշվետվողականություն:

Հաշմանդամության հարցում ՀՀ ամենաբարձր ցուցանիշը վերաբերում է օրենսդրությանը և քաղաքականությանը. այն կազմում է 0,603 միավոր: Բարձր է նաև համակարգման ցուցանիշը (0,500)՝ ծառայությունների (0,312), կարողության (0,300) և հաշվետվողականության (0,430) համեմատությամբ: Միավորները ցույց են տալիս, որ ՀՀ-ն հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանության իր պարտավորությունների կատարման առումով կենտրոնացրել է իր ջանքերը օրենսդրության և կանոնակարգերի մշակման վրա:

ՀՀ օրենսդրությունը անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության խնդրին և հատուկ պարտականություն է սահմանում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների բարօրությունը խթանելու համար¹⁶: Կրթության ոլորտում ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ներառական կրթություն նախադպրոցական, տարրական և ավագ դպրոցում¹⁷: **Ներառական միջավայրին ուղղված միջոցառումները դեռևս չեն տարածվում այլընտրանքային խնամքին, օրինակ՝ խաղերի և հանգստի համար նախատեսված վայրերին:** «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքով նախատեսվում է, որ հանրային ծառայությունները և կառույցները պատշաճ կերպով հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց: Հասանելիության պահանջը տարածվում է նաև գործատուների վրա¹⁸: Սակայն օրենքը չի պահանջում, որ շինարարությունը և նախագծերը համապատասխանեն վայրերի հասանելիության միջազգային չափորոշիչներին: **Առանց նման չափորոշիչների ամրագրման կարող է դժվար լինել գործնականում բավականաչափ հասանելիություն ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար, չնայած նման ձևական պահանջների առկայության¹⁹:**

Հաշվի առնելով ՀՀ-ում ծառայությունների և կարողության միավորները՝ ՀՀ-ն պետք է շարունակի գործողություններ ձեռնարկել՝ ապահովելու, որ հաշմանդա-

մուկություն ունեցող երեխաներին առանց որևէ խտրականության հասանելի լինեն ծառայությունները և այլ վայրերը: Կերջերս ընդունված ներառական կրթության ծրագիրը լուրջ քայլ է ՀՀ-ի կողմից ԵԻԿ-ով ստանձնած պարտավորություններն իրականացնելու համար: Որպես հաջորդ քայլ պահանջվում է դրա իրականացումը: ՀՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համագործակցում են համայնքային և պետական կառավարման մարմինների հետ մանկապարտեզներում և տարրական կրթության հաստատություններում ներառական կրթություն ներմուծելու համար:

Լրացուցիչ ռեսուրսներ և կարողություն են անհրաժեշտ այս նախաձեռնություններից սովորելու և դպրոցական միջավայրերում փոփոխություններ կատարելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող դպրոցահասակ երեխաների 70 տոկոսը դեռևս դպրոց չի հաճախում²⁰: ՀՀ դպրոցներում կպահանջվի ներառական կրթության լավ հմտություններ ունեցող ուսուցչի օգնությունը՝ դպրոցի սենյակները բոլորի համար հասանելի դարձնելու հետ մեկտեղ:

Դասապրոցեսից դուրս նույնպես անհրաժեշտ է ծառայություններ մշակել: Հաստատություններում, որտեղ բնակվում են հաշմանդամություն ունեցող երեխաներ, գործում են տարբեր մասնագետներ, և առկա են աջակցության մեխանիզմներ: Սակայն հաստատությունների բեռնաթափման, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների մասով, ԵԻԿ-ի պահանջների լույսի ներքո՝ նոր ջանքեր են անհրաժեշտ համայնքներում հաստատությունների փոխարեն վերականգնողական կենտրոններ ստեղծելու համար: Առողջապահությունը մեկ այլ ոլորտ է, որը անհրաժեշտ է զարգացնել: ՀՀ-ն առաջարկում է հաշմանդամություն ունեցող անձանց համար անվճար բուժսպասարկում, չնայած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քիչ թվով ծնողներ են օգտվում այդ արտոնությունից: Անհրաժեշտ է համայնքային մակարդակում տեղեկություն տրամադրել հաշմանդամության գրանցման, ինչպես նաև հաշմանդամության խումբ ունեցող անձանց համար անվճար բուժսպասարկման մասին²¹: «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար պետք է անհատական ծրագրեր մշակվեն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող երեխաների ավելի քան 50 տոկոսը չունի անհատական ծրագրեր²²: Քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել, որ անհատական ծրագրեր մշակվեն հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար, և իրագործվեն այդ ծրագրերը դեպքի վարման ընթացակարգերի միջոցով:

Հաստատություններից դուրս վերականգնողական ծառայությունների շրջանակը նախատեսելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ-ն մշակի ֆինանսական և լիցենզավորման չափորոշիչներ: Այս չափորոշիչները թույլ կտան շահառուներին և իրենց ընտանիքներին հաշվետու դարձնել ծառայություններին արդյունքների համար և թույլ տալ, որ պետական մարմինները համապատասխան կերպով գնահատեն դրանց աշխատանքը:

Ծնողներից բաժանված երեխաներ

Հետևյալ միավորները գնահատում են կառավարության ջանքերը՝ ուղղված ծնողներից երեխայի բաժանմանը: Չնայած ոչ բոլոր կենսաբանական ընտանիքներն են բռնությունից և անտեսումից ապահով կամ ոչ բոլորն են ստեղծում երեխայի պատշաճ զարգացման մթնոլորտ, կենսաբանական ընտանիքի խնամքի և պաշտպանությունից դուրս բնակվելը լրացուցիչ խոցելիություն է ստեղծում երեխաների համար: Ծնողների կողմից խնամքի և պաշտպանության բացակայության պայմաններում այլ խմբեր և անհատներ պետք է ակտիվորեն ներգրավվեն կարիքները գնահատելու, պաշտպանություն և խնամք տրամադրելու, զարգացման և աճի համար միջավայր ստեղծելու համար: Առանց սոցիալական համապատասխան ցանցերի և ջատագովների ներգրավման, ընտանիքից բաժանված երեխաները հիմնական խնամք և պաշտպանություն չեն ստանա՝ իրենց երկարատև զարգացումը, բարեկեցությունը ապահովելու համար: Փոխարենը՝ լքվածության և աղքատության հետևանքով երեխաները վտանգավոր վարքագծի և վնասակար դերակատարների նկատմամբ ավելի խոցելի են դառնում: ԵԻԿ-ը սահմանում է մասնակից պետությունների որոշակի պարտականություններ՝ այս խմբի աղջիկներին և տղաներին պաշտպանելու և նրանց նկատմամբ հոգածություն ցուցաբերելու համար:

ԵԻԿ-ի մասնակից պետությունները պետք է սկզբում գործեն կանխելու ծնող և երեխա առանձնացումը այնքան ժամանակ, քանի դեռ ծնողների հոգածությունը երեխայի լավագույն շահից է բխում (օրինակ՝ երեխային ընտանիքում վնաս չի սպառնում): Եթե անհրաժեշտ է բաժանում՝ երեխային պաշտպանելու համար, մասնակից պետությունները պետք է որոշ ընթացակարգեր պահպանեն երեխաների անվտանգության համար և խրախուսեն երեխայի համար զարգացման լավագույն ճանապարհը: Եթե առանձնացումը մշտական բնույթ է կրելու, ԵԻԿ-ով առաջարկվում է այլընտրանքային ընտանիքը կամ համայնքային միջավայրը որպես երեխայի զարգացման համար տարբերակ: Վերջապես, ԵԻԿ-ով պատասխանատվություն է նախատեսվում առանց ընտանիքի կամ բնակության վայրի մնացած երեխաների՝ փողոցում բնակվելու համար:

Կանխելով բաժանումը. աջակցելով ընտանիքներին միասին մնալ




ԵԻԿ-ի 9-րդ հոդվածը անդրադառնում է ծնողի և երեխայի բաժանմանը՝ նախատեսելով պետության երեք հիմնական պարտականություն: Այն պահանջում է, որ մասնակից պետությունները նախատեսեն ծառայություններ և աջակցեն ընտանիքներին՝ նպատակ ունենալով միասին պահել ընտանիքը: Երկրորդ՝ պահանջվում է, որ մասնակից պետությունները բաժանեն երեխային ընտանիքից միայն այն պարագայում, երբ բաժանումը բխում է երեխայի լավագույն շահից: Երրորդ՝ սույն հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները աջակցեն ծնողներին և երեխաներին կապ պահպանել այն դեպքում, երբ ծնողներն ու երեխաները բաժանված են: Առաջին պահանջը առավել հանգամանորեն ներկայացվում է ստորև:

Այսպես, պահանջվում է, որ մասնակից պետությունները ծառայություններ և աջակցություն տրամադրեն՝ նպատակ ունենալով ընտանիքները պահպանել: Պետությունը կարող է կարևոր դերակատարություն ունենալ ոչ անհրաժեշտ բաժանումները կանխելու համար: ՀՀ միավորը կազմում է 0,423՝ առավելագույնը 1,0 միավորից և զբաղեցնում է յոթերորդ տեղը ինը երկրների շարքում: Վրաստանը ամենամոտն է ՀՀ-ին, նրա միավորը 0,500 է:

ՀՀ-ն սահմանափակ առաջընթաց է գրանցել ընտանիքներին միասին պահելու համար. օրենսդրություն և քաղաքականություն (0,500), ծառայություններ (0,500), կարողություն (0,00), համակարգում (0,167) և հաշվետվողականություն (0,667):

Կարելի է արձանագրել ՀՀ առաջընթացը ընտանիքներին միասին պահելու վերաբերյալ օրենսդրության և քաղաքականության բաղադրիչի մասով: Որոշ մարզերում ծառայությունները հասանելի են: ՀՀ-ում համակարգը մի շարք ծրագրերի միջոցով կանխարգելում է ծնողների և երեխաների բաժանումը: Առաջին՝ մինչև 2015 թ.-ը սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ ունեցող ընտանիքներին առաջարկվել է սոցիալական աջակցություն նյութական միջոցների տրամադրման, խորհրդատվության և այլ գործողությունների միջոցով՝ կենսակերպը բարելավելու համար²³: **Առաջարկվում է, որ ՀՀ-ն վերանայի սոցիալական աջակցության օրենսդրությունը և ֆինանսավորում տրամադրի ըստ անհրաժեշտության:** Աջակցության հասանելիության ընդլայնմանն ուղղված ջանքերը և ՀՀ-ում աղքատ քաղաքացիների մասնակցության ավելացումը նույնպես կամրապնդի ՀՀ գործողությունները՝ ուղղված ծնող-երեխա բաժանման կանխարգելմանը: Երկրորդ՝ ՀՀ ոստիկանությունը, քաղաքացիներին պաշտպանելու իր գործառնությունից ելնելով, լիազորված է փնտրել կորած անձանց²⁴: Երրորդ՝ որոշ մարզերում կան խորհրդատվական ծառայություններ (ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին) և ցերեկային խնամքի կենտրոններ, որպես կանխարգելման մեխանիզմներ, որոնք գործում են ծնող-երեխա բաժանումը նվազեցնելու համար: Ցերեկային խնամքի կենտրոնները նույնպես որպես երեխայի խնամքի տարբերակներ թույլ են տալիս, որ երկու ծնողներն էլ աշխատեն, որպեսզի պահեն ընտանիքը: Խորհրդատվությունը մեկ այլ կարևոր գործոն է ծնող-երեխա բաժանումը սահմանափակելու համար:




Պիլոտային մարզերի բարեհաջող արդյունքները հաշվի առնելով՝ առաջարկվում է, որ ՀՀ-ն պետական մակարդակում գնահատի այս ծառայությունների հասանելիությունը: Ծառայությունների մատուցման հետ մեկտեղ անհրաժեշտ է կարողություն՝ ռեսուրսների, տեխնիկական անձնակազմի և մեխանիզմների՝

Կարիքը գնահատելու համար:

Եթե ազգային մակարդակում ծառայությունները դասակարգվեն, հետագայում համակարգում պետք է իրականացնել դրանց շրջանակը ընդլայնելու և հեռավոր վայրեր հասանելիությունը ապահովելու համար: ԽԽՅ-ի մարզային ԸԿԵԻՊԲ-ի, դպրոցների, ոստիկանության բաժինների հետ կապերը կարող են միասնական մոտեցում ձևավորել ընտանեկան աջակցությանն ուղղված, որը հետագայում կնվազեցնի ծնող-երեխա բաժանումը: Համակարգում պետք է ձևավորվի համագործակցության ընթացակարգերի և լիազորությունների տարանջատման հիման վրա՝ կրկնորդումները սահմանափակելու և ավելի արդյունավետ համակարգ կառուցելու համար:

Բաժանման Նախաձեռնում. Երեխաներին ապահովության մեջ պահելը



ԵԻԿ-ի 9-րդ հոդվածը մասնակից պետությունների համար նախատեսում է ուղղորդում այն դեպքերում, երբ երեխան պետք է բաժանվի ծնողներից: Հոդվածը նախատեսում է, որ մասնակից պետությունները կարող են ծնողի և երեխայի միջև բաժանում նախատեսել, միայն երբ այն երեխայի լավագույն շահից է բխում: Այսպես, ԵԻԿ-ը թույլ է տալիս, որ մասնակից պետությունները երեխաներին իրենց ծնողներից բաժանեն միայն այն դեպքում, երբ ծնողների խնամքի տակ մնալը կարող է վտանգել երեխայի զարգացումը և բարօրությունը:


ՀՀ-ն զբաղեցնում է ինը երկրների շրջանում յոթերորդ տեղը 0,426 միավորով՝ առավելագույնը 1,0 միավորից: ՀՀ միավորին ամենամոտը Վրաստանի (0,448) և Մոլդովայի (0,471) միավորներն են:

ՀՀ ընդհանուր ծառայությունների, կարողության և համակարգման միավորը 0,500 է: Օրենսդրության և քաղաքականության միավորը 0,423 է, հաշվետվողականությունը՝ 0,312 միավոր:

ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է, որ ծնող-երեխա բաժանումը կարող է իրականացվել միայն երեխայի լավագույն շահը հաշվի առնելով: Իրավական նորմերում ուղղակիորեն չի օգտագործվում ԵԻԿ-ի եզրույթը՝ «երեխայի լավագույն շահ»: Այս ձևակերպումները առանձնակի են, քանի որ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հանձնաժողովը ուղենիշներ է սահմանում այս եզրույթի սահմանման և հանգամանքների վերաբերյալ: Եթե ՀՀ օրենսդրությամբ հստակ չամրագրվի «երեխայի լավագույն շահ» եզրույթը, ՀՀ օրենսդրությունը կարող է սահմանափակ կերպով արտացոլել ՄԱԿ-ի հանձնաժողովի կողմից առաջարկվող հասկացությունները և լեզուն: Առաջարկվում է, որ ՀՀ-ն վերաձևակերպի օրենսդրությունը և ընդգրկի «երեխայի լավագույն շահ» եզրույթը: Անորոշ լեզվի բացառումը կնվազեցնի տարատեսակ մեկնաբանությունները, և կնախատեսվի ծնող-երեխա բաժանումը որպես վերջին տարբերակ:

Ծնողական իրավունքները սահմանափակելու կամ վերացնելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է, որ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը ԽՀՀ-ի հետ համատեղ իրականացնի ընտանիքի դրության գնահատում²⁵: Որդեգրման դեպքում բազմամասնագիտական խումբը, որում ընդգրկված են հոգեբան, իրավաբան և այլ համապատասխան շահագրգիռ կողմեր, գնահատման գործընթացում կարևոր դերակատարություն ունի: Օրենսդրության համաձայն՝ 10 տարեկանից բարձր երեխան իրավունք ունի կարծիք արտահայտելու և ազդեցություն ունենալու գնահատման և դատական գործընթացներում²⁶: Չնայած բոլոր երեխաները իրավունք ունեն ներկա գտնվելու դատական բոլոր փուլերում, որոնց ընթացքում որոշվում է նրանց կարգավիճակը, առաջարկվում է, որ ՀՀ-ն ամրագրի մինչև 10 տարեկան երեխաների կողմից կարծիք արտահայտելու իրավունքը, ինչպես նաև նրանց մասնակցությունը՝ տարիքային և զարգացման առանձնահատկությունները հաշվի առնելով:

Դատական ընթացակարգերի ժամանակ երեխաների ավելի մեծ պաշտպանություն ապահովելու համար առաջարկվում է դատավորների համար երեխայի իրավունքների և քաղաքացիական դատավարության վերաբերյալ, այնքանով որքանով առկա են երեխաներին, դասընթացներ իրականացնել: Օրինակ՝ արդարադատության ակադեմիան առաջարկում է նման դասընթացներ: Առաջարկվում է, որ երեխայի պաշտպանության և դատավարության վերա-





բերյալ թեստերը ստանդարտացվեն և որպես պարտադիր պահանջ ներկայացվեն դատական համակարգի աշխատողների համար:

Ծնողների իրավունքների սահմանափակման կամ դադարեցման դեպքում խորհրդատվություն և հոգեբանասոցիալական աջակցություն է անհրաժեշտ տրամադրել՝ ծնողների և երեխաների համար դժվարությունները թեթևացնելու համար: Խորհրդատվական ծառայություններ են տրամադրվում ԸԿԵԻՊԲ կողմից: Որպես հաջորդ քայլ անհրաժեշտ է համակարգել համայնքային ծառայությունների և այլ դերակատարների աշխատանքը դեպքի վարման տեխնիկայի միջոցով:

Այլընտրանքային համայնքային տարբերակները նույնպես պետք է զարգացնել ծնողներից բաժանված երեխաների կարիքները բավարարելու համար: Հաստատությունները մտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակության վայրը, ՀՀ-ում խնամատարության և խնամակալության տարբերակները սահմանափակ են:

Կապի պահպանումը ծնողի և երեխայի միջև



Ընտանիքներից բաժանված երեխաների խնամք (այլընտրանքային խնամք)

Այն ժամանակ, երբ երեխան բաժանվում է իր ծնողներից (ծնողների կողմից հրաժարվելու կամ պետության միջամտության արդյունքում), մասնակից պետությունները պարտավոր են թույլ տալ և աջակցել երեխայի և ծնողների միջև կապի պահպանմանը: ԵԻԿ-ով սահմանվում է, որ ծնողի և երեխայի միջև կապը և հարաբերությունը երեխայի կարևոր իրավունքն է: Ընտանիքը և, մասնավորապես, ծնողական կապը նպաստում է անձի էմոցիոնալ զարգացմանը:

Ինդեքսով գնահատվում է կառավարության կողմից իրականացված ջանքերը ծնողի և երեխայի միջև կապի պահպանման ուղղությամբ ԵԻԿ-ի 9-րդ հոդվածի համաձայն: Ընդհանուր առմամբ բոլոր ինը երկրները կարևոր քայլեր են ձեռնարկել բաժանված ծնողների և երեխաների միջև կապը պահպանելու համար: ԶՅ միավորը այս մասով կազմում է 1,0, ինչը ամենաբարձր ցուցանիշն է: Վրաստանը, Կոստվոն, Ռումինիան և Սերբիան նույնպես ունեն 1,0 միավոր:


ԶՅ-ի ցուցանիշը 1,0 միավոր է, քանի որ օրենսդրությունը, ինչպես նաև պրակտիկան թույլ է տալիս, որ ծնողները և երեխաները կապ պահպանեն, բաժանված լինելու դեպքում այնքանով, որքանով այդ կապը բացասական ազդեցություն չունի երեխայի վրա: Գոյություն ունեն դատական ընթացակարգեր, որոնցով գնահատվում է՝ արդյոք ծնողի և երեխայի միջև հաղորդակցությունը բացասակա՞ն ազդեցություն ունի երեխայի համար: ԽՅՅ-ներից, խնամատար ծնողներից և հաստատությունների տնօրեններից կամ փոխտնօրեններից կարծիք են հարցնում դատարանում²⁸:

Պետությունները նաև պետք է քայլեր ձեռնարկեն պատշաճ խնամքի մթնոլորտ ստեղծելու համար այն երեխաների համար, որոնք զրկված են իրենց կենսաբանական ընտանիքներից: ԶՅ օրենսդրության համաձայն՝ ծնողական խնամքից զրկված երեխաները իրավունք ունեն պաշտպանության, հոգաձուլության, կրթության և աջակցության մի շարք պետական մարմինների միջոցով²⁹: Թեև օրենսդրությամբ նախատեսվում է, որ հաստատությունը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց, ԶՅ-ն շարունակում է հաստատություններում, ներառյալ հատուկ դպրոցներում բնակեցնել մոտ 4.000 աղքիկների և տղաների: Օրենսդրությամբ նախատեսվում է նաև խնամքի այլ տարբերակներ, ներառյալ խնամատարությունը, խնամակալությունը և որդեգրումը, բայց քանի որ այս ծառայությունները բավականաչափ զարգացած չեն և ավելի սահմանափակ են, հաճախ միակ տարբերակը մնում է հաստատությունը³⁰:


Առաջարկվում է, որ կառավարությունը իր ջանքերը կենտրոնացնի հաստատությունների բեռնաթափմանը (ինչպես նախատեսված է երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրով), որով նախատեսվում է պատշաճ կերպով զարգացնել այլընտրանքային համայնքահեն տարբերակները՝ սահմանափակելու ծնող-երեխա բաժանումը և դասակարգելու այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են խնամատարությունը և խնամակալությունը³¹: Խնամատարությունը պետք է ընդգրկի ժամանակավոր, արտակարգ և երկարաժամկետ հոգաձուլություն, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների համար հոգաձուլություն:

Կարճաժամկետ հատվածում, դիտարկումներ և պարբերաբար գնահատում պետք է իրականացնել հաստատություններում երեխաների իրավիճակի վերաբերյալ, ինչը կարևոր բաղադրիչ է երեխայի պաշտպանության համար:


Ընտանիքներից բաժանված երեխաների խնամքը



Հաստատությունները պետք է գործեն որակի և ֆինանսական չափորոշիչների համաձայն: Օրենսդրությամբ նաև արգելվում է ծեծը որպես պատիժ դպրոցներում և հաստատություններում³²: Հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը, որոնց ենթակա են հաստատություններում բնակվող երեխաները, որոնք միայն կապ ունեն հաստատությունների կողմից նշանակված խնամողների հետ՝ դիտարկումներ իրականացնող անկախ մարմինները պետք է առանց նախապես զգուշացնելու պարբերաբար այցելություն կատարեն այդ կառույցներ: Դասական հաստատություններում բողոքարկման մեխանիզմներ առկա են, բայց ցերեկային և գիշերային խնամքի կենտրոններում՝ ոչ³³:



Որդեգրում




Այն դեպքերում, երբ ծնողները զրկվում են ծնողական իրավունքներից, ԵԻԿ-ը նախատեսում է երեխայի իրավունքը բնակվել ապահով ընտանեկան միջավայրում: Որդեգրումը թույլ է տալիս, որ առանց խնամքի մնացած երեխաները բնակվեն ապահով ընտանեկան միջավայրում:

ՀՀ միավորը այս առումով 0,409 է՝ առավելագույնը 1,0 միավորից: Այն ամենամոտն է Բոսնիա-Հերցեգովինային և Ալբանիային, որոնց միավորները կազմում են 0,423 և 0,500 համապատասխանաբար:

ՀՀ-ն բարձր ցուցանիշ ունի համակարգման մեխանիզմների ձևավորմանն ուղղված ջանքերի (0,833) և օրենսդրության/քաղաքականության (0,553) առումով: Որդեգրման համար ծառայությունների միավորը կազմում է 0,412, իսկ կարողությունը՝ 0,250: Հաշվետվողականությունը ցածր է՝ 0,187:

ՀՀ-ում որդեգրման ծառայություններ միայն պետական մարմիններն են իրականացնում: ՀՀ-ն չի լիազորում որևէ մասնավոր միջնորդ ծառայությունների հանդես գալ որպես կամուրջ պոտենցիալ որդեգրող ծնողների և որդեգրման ենթակա երեխաների միջև: **Չկան որևէ չափորոշիչներ՝ որակական կամ ֆինանսական, որոնք ընդունվել են կամ պահպանվում են այն մարմինների կողմից, որոնք կարգավորում են որդեգրման գործընթացը:** Առանց հստակ կարգավորումների և չափորոշիչների, որոնք սահմանում են հայեցողության սահմանները, շահերի բախումը և տարբեր մարմինների կողմից ներգրավման ընթացակարգերը, առկա է որդեգրման ընթացակարգերում կոռուպցիայի և ոչ պատշաճ վերահսկողության հնարավորություն:


ՀՀ-ն վավերացրել է երեխաների պաշտպանության և միջպետական որդեգրման բնագավառում համագործակցության մասին Հաագայի կոնվենցիան (1993), սակայն ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում պարբերաբար դիտարկումներ որդեգրումից հետո (բացառությամբ միջպետական որդեգրումների, որոնց դեպքում Հաագային կոնվենցիայով սահմանվում է վերահսկողություն): Որդեգրումից հետո բավարար վերահսկողության, ինչպես նաև որդեգրումը կարգավորելու համար որակի կամ ֆինանսական չափորոշիչների և պետական մարմինների հաշվետվողականության բացակայության պայմաններում, առաջարկվում է, որ պետությունը արագորեն ներմուծի բավարար վերահսկողության և դիտարկումների գործընթաց՝ հավաստիանալու, որ որդեգրված երեխաները ապահով են³⁴:



Որդեգրման ծառայությունները նաև պետք է իրականացնեն ընտանիքի խորհրդատվության և սոցիալական աջակցության ուսումնասիրություն՝ ծանոթանալու այն միջավայրին, որտեղ որդեգրվելու է երեխան, ինչպես նաև պետք է լրացուցիչ ընթացակարգեր նախատեսվեն այդ վայրերի նկատմամբ դիտարկումներ իրականացնելու համար: Քանի որ ՀՀ-ում չկան պաշտոնապես որդեգրման հարցերով զբաղվող ծառայություններ, ԽՀՀ-ները և ԸԿԵԻՊԲ-ներն են լիազորված որդեգրման վերաբերյալ եզրակացություն տալու և պոտենցիալ որդեգրման ընտանիքներ մուտք ունենալու համար: Որդեգրման հարցերով նրանք հատուկ դասընթացներ չեն անցել, քանի որ ՀՀ-ում չկան պատշաճ ընթացակարգեր և չափորոշիչներ: Մեծ աշխատանք պետք է կատարել դիտարկումներ իրականացնելու միջոցով որդեգրման ընթացքում և դրանից հետո երեխաներին պաշտպանելու համար:

Պետական ծառայությունները պետք է թույլ տան բաց տեսակի որդեգրումներ (երբ կենսաբանական և որդեգրող ընտանիքների միջև կապ է պահպանվում) և թույլ տան, որ երեխաները գաղտնի որդեգրման դեպքում իրենց բժշկական պատմությունից, ինչպես նաև ինքնությունը և առողջությունը պահպանելու համար ընտանիքի այլ փաստերի մասին տեղյակ լինեն:

Քաղաքականության վերաբերյալ եզրահանգումներ



ԵԻԿ-ի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները սույն Կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար...»: Նպատակ չի հետապնդվել, որ ԵԻԿ-ը մնա իդեալների փաստաթուղթ, այլ լինի մի փաստաթուղթ, որն իրականացում է ներկայացում:

ԵԻԿ-ով ստանձնած պարտավորությունների կատարման Հայաստանի Հանրապետության միավորը կազմում է 0,355՝ առավելագույնը 1,0 միավորից: Օրենսդրության, քաղաքականության (0,547) և իրականացման միջև տարբերության միավորը (0,355) բավականին փոքր է՝ ի տարբերություն տարածաշրջանային այլ երկրների: Սա նշանակում է, որ Հայաստանը իրականացրել է ներպետական օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները: Սակայն քանի որ ՀՀ-ի օրենսդրության, քաղաքականության միավորը ցածր է, անհրաժեշտ է ընդլայնել ներպետական օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները: Հետագայում անհրաժեշտ կլինի իրականացնել այս փոփոխված, ավելի ընդլայնված քաղաքականությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ինդեքսով հետևյալ առաջարկություններն է ներկայացվում կառավարության կողմից իրականացվող գործողությունների հինգ բաղադրիչների վերաբերյալ (քաղաքականություն, ծառայություններ, կարողություն, համակարգում, հաշվետվողականություն):

[Քաղաքականություն]

Տարածաշրջանում դեռևս մեծ թվով երեխաներ բնակվում են հաստատություններում: Սա մտահոգիչ խնդիր է, քանի որ հաստատություններում երեխաների բնակեցումը չափազանց վնասակար է նրանց, հատկապես փոքր տարիքի երեխաների համար: Ջանքեր պետք է գործադրվեն բոլոր մեծ հաստատությունները փակելու համար՝ սկսած լիովին արգելելով 0-3 տարեկան երեխաների բնակեցումը նման հաստատություններում:

[Ծառայություններ, կարողություն]

Անհրաժեշտ է համայնքային խնամքի ծառայություններ ներմուծել՝ որպես այլընտրանք հաստատություններին: Հաստատությունների բեռնաթափումը պետք է շարունակվի հստակորեն և ռեսուրսների կիրառմամբ: ՀՀ համակարգը խոցելի իրավիճակում գտնվող երեխաների խնդիրներին պատշաճ արձագանք չի կարողանա տալ, մինչև նման այլընտրանքային տարբերակները համընդհանուր կերպով չներմուծվեն: Խնամատարությունը, խնամակալությունը և երեխա-ծնող բաժանման կանխումը հիմնական նախաձեռնություններն են, որոնք պետք է հետագայում ի կատար ածվեն:

[Ծառայություններ, կարողություն]

Ֆինանսական ավելի մեծ ներդրումներ է անհրաժեշտ կատարել ծառայությունների և աշխատակազմի համար հաջողված պիլոտային ծրագրերից դեպի համակարգային մոտեցում անցում կատարելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր կառավարությունները պետք է ընտրություն կատարեն ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պարագայում, Հայաստանը կկարողանա ավելի մեծ ներդրումներ կատարել, երբ բյուջեի վերլուծություն կատարվի հետևյալ տվյալների համադրությամբ. (i) համընդհանուր բյուջեի և երեխաների համար ծախսերի համամասնությունը, (ii) մարզերում կամ երեխաների կոնկրետ խմբերի միջև բյուջեի անհամաչափ բաշխումը, և (iii) ամենախոցելի երեխաները: Այս վերանայումը հնարավորություն կտա տարանջատված տվյալների կիրառմամբ որոշելու, թե արդյոք և ինչպե՞ս է ՀՀ բյուջեի բաշխումը հասանելի դառնում երեխաների ամենախոցելի խմբերին, և

արդյոք նման ֆինանսավորումը համահունչ է ԵԻԿ-ով ստանձնած պարտավորություններին: Առանց բյուջեի մանրամասն պարբերաբար վերանայման՝ դժվար է հստակ, փոփոխությունների հանգեցնող որոշումներ կայացնել ֆինանսավորման և խնդրի կարևորության վերաբերյալ:

[Հաշվետվողականություն և կարողություն]

Անհրաժեշտ է տվյալներ հավաքել, որպեսզի հնարավոր լինի հասկանալ ազգային միտումները, ՀՀ-ում կոնկրետ խոցելիության տեսակները և ծրագրերի/նախաձեռնությունների ազդեցությունը: Թեև ՀԿ-ները և միջազգային կազմակերպությունները նման ուսումնասիրություններ իրականացրել են, ՀՀ Կառավարության կողմից ԵԻԿ-ի խնդիրների վերաբերյալ ազգային մակարդակում կատարված ուսումնասիրությունը կարող է կարևոր վերլուծություն հանդիսանալ, որի հիման վրա ավելի արդյունավետ քաղաքականություն կմշակվի: ՀՀ համատեքստը և միջավայրը, յուրաքանչյուր երկրի նման, յուրահատուկ է և առանձնակի ուշադրություն պետք է դարձվի մշակույթին, խոցելիությանը, ռիսկերին և հասանելի միջոցներին:

[Ծառայություններ]

Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ծառայություններ և մեխանիզմներ բռնության դեպքերի հայտնաբերման և հաղորդման համար, որոնք հասանելի կլինեն աղջիկներին և տղաներին: Առանց բռնության դեպքերի հայտնաբերման և հաղորդման հասանելի և հայտնի ընթացակարգերի, ՀՀ-ն չի կարող երաշխավորել, որ բռնության ենթարկված երեխաները օգնության կդիմեն: Ավելին, տեղական և մարզային սոցիալական աշխատողները, ներառյալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (ԽՀՀ) և երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժինները դեռևս չեն կարող ակտիվորեն հայտնաբերել և հաղորդել բռնությունների դեպքերի մասին համապատասխան օրենսդրության բացակայության պայմաններում: Նրանք միայն կարող են միջամտել և վարել դեպքերը, երբ բռնության դեպքի մասին արդեն հաղորդվել է: Ավելի համապարփակ մոտեցում է անհրաժեշտ որդեգրել նման դեպքերը հայտնաբերելու և հաղորդելու համար:

[Կարողություն, համակարգում]

ՀՀ վերջին բարեփոխումները՝ ուղղված տարբեր մակարդակներում սոցիալական աշխատանքի և դեպքի վարում ներմուծելուն պահանջում են ուշադրության բևեռում համակարգման մեխանիզմների և աշխատակազմի դասընթացների վրա: Նոր բարեփոխումների հետ մեկտեղ անհրաժեշտ է աշխատակազմի համար համապատասխան դասընթացներ մշակել և ուղղորդել ամենօրյա արձանագրությունների կազմման և այլ հարցերի կապակցությամբ, այնպես որ պարտականությունների բաշխում տեղի ունենա. աշխատակազմը և ծառայությունների ցանցը իմանա իր դերը և արդյունավետորեն իրար հետ համագործակցի:

Երախտագիտություն

Դոնոր կազմակերպություններ

ChildPact-ը և իր ազգային կոալիցիայի անդամները, ինչպես նաև Կորլո Վիժն միջազգային կազմակերպությունը շնորհակալություն են հայտնում դոնոր կազմակերպություններին, որոնք ֆինանսական և այլ աջակցություն են ցուցաբերել այս գործընթացի ընթացքում: Մենք խորին երախտագիտություն ենք հայտնում նրանց աջակցության և մեզ վստահելու համար:



Չեղիսակներ

Ժողելին Փեններ Հոլլը Միջին Արևելքի և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի Կորլո Վիժն կազմակերպության քաղաքականության հարցերով տնօրենն է: Նա ունի միջազգային ուսմունքների և տնտեսագիտության բակալավրի աստիճան, JD իրավաբանության և LLM աստիճան մարդու իրավունքների հարցերով: Նախքան Կորլո Վիժնի համար աշխատելը, ժողելինը նաև աշխատել է Կոստա Ռիկայում գտնվող Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանում:

Էնդի Գուլթը տարածաշրջանում երեխաների պաշտպանության առաջատար մասնագետներից է, ավելի քան 26 տարվա աշխատանքային փորձով երեխայի բարեկեցության և պաշտպանության հարցերով: Աշխատել է միջազգային հասարակական կազմակերպություններում, ՄԱԿ-ում, Ռումինիայի, Բուլղարիայի, Մոլդովայի, Ռուսաստանի և Խորվաթիայի կառավարությունների համար: 1997 թ.-ից Էնդի Գուլթը ընդգրկված է Երեխայի բարեկեցության բարեփոխումների ռազմավարության մշակման գործում՝ Ռումինիայի, Բուլղարիայի, Մոլդովայի, Ռուսաստանի և Խորվաթիայի համար:

Տվյալների վերլուծողներ

Միրա Անտոնյանը ՀՀ-ում երեխաների պաշտպանության ցանցի նախագահն է և ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի գործադիր տնօրենը: Նա փորձառություն ունի երեխայի իրավունքների, երեխայի պաշտպանության, համայնքային կրթության, տեխնիկական աջակցության, կարողությունների և կազմակերպությունների զարգացման, քաղաքականության մշակման և սոցիալական հարցերով: Նա նաև դասավանդում է Երևանի պետական համալսարանում:

Նախագահը: 2001թ.-ից աշխատել է երեխայի պաշտպանության ոլորտում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Միջազգային քրեական բարեփոխումներ կազմակերպության, ԵԱՀԿ-ի, ՓՀ միջազգային կազմակերպության և ՀՀ կառավարության համար: Սովորել է ԵԴՀ-ում դատական հոգեբանի մասնագիտացմամբ:

Արշակ Գասպարյանը քրեական արդարադատության փորձագետ է, «Սոցիալական արդարություն» ՀԿ

Դավիթ Թումասյանը ՀՀ քննչական կոմիտեի իրավաբանական վարչության պետն է: Աշխատել է այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Սորոս հիմնադ-

րամը և «Սեյվ դը չիլդրն» կազմակերպությունները: Իրավաբանական գիտությունների թեկնածու է, դասավանդում է ՀՀ ոստիկանության ակադեմիայում:

Նունե Բայանը Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի ծրագրի համակարգող է: Աշխատել է Բելգիայի «Բժիշկներն առանց սահմանների», ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Բաց հասարակության հիմնադրամի, Համաշխարհային բանկի քաղաքացիական հասարակության հիմնադրամի և ՀՀ նախարարությունների հետ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի փորձագիտական խմբի անդամ է, ունի սոցիալական աշխատողի և սոցիալական քաղաքականության մասնագետի փորձառություն:

Էդուարդ Իսրայելյանը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի երեխաների պաշտպանության բաժնի պետն է: Երեխայի պաշտպանության ոլորտում ունի 14 տարվա փորձառություն: Աշխատել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամում, Վորլդ Վիժն-Հայաստան կազմակերպությունում, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում որպես երեխայի պաշտպանության ավագ մասնագետ:

Նվարդ Փիլիպոսյանը Կանանց ռեսուրսային կենտրոնի իրավաբանն է: Աշխատել է Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնում՝ սեռական ոտնձգության ենթարկվածներին, ներառյալ երեխաներին տրամադրելով իրավաբանական օգնություն: Սովորել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավաբանության բաժնում: ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

րել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավաբանության բաժնում: ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

Գրիգորի Գրիգորյանը ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի քաղաքականության ծրագրի պատասխանատուն է և աշխատել է Վորլդ Վիժն-Հայաստան կազմակերպությունում որպես երեխայի պաշտպանության ադվոկատի մասնագետ: Աջակցել է երեխաների պաշտպանության ցանցի ձևավորմանը: Նա եղել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ: Սովորել է ԱՄՆ-ի Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի դիվանագիտության և իրավունքի դպրոցի հանրային քաղաքականություն և կառավարում բաժնում, ավարտել է ԵՊՀ-ն, քաղաքագիտության թեկնածու է:

Վահե Գևորգյանը սոցիոլոգ է, ծրագրի համակարգման մեծ փորձառություն ունի: Աշխատել է տեղական և միջազգային կազմակերպություններում ու պետական հաստատություններում որպես ծրագրի ղեկավար, համակարգող, վերլուծաբան, թիմի ղեկավար և անկախ փորձագետ: Նա ջատագով է անհատներին, ընտանիքներին, խմբերին և համայնքներին պատշաճ ռեսուրսների ապահովման, ռազմավարությունների և ծրագրերի մշակման, գործընկերների և համայնքային գործընկերների հետ դրական աշխատանքային հարաբերությունների պահպանման և կարողությունների զարգացման, բյուջեի ձևավորման և հաշվետվության հարցերով:

Տվյալների ներկայացում և ձևավորում

Բրենդան Սուդոյ
Սթիվեն Բաննախան

Խմբագիր

Թագուհի Սուլիյան

Ֆոտոնկարիչ

Սիլվյու Գեթի

Հավելված. Ինդեքսի մեթոդաբանությունը

Ինդեքսի շրջանակը

Ինդեքսը ընդգրկում է 626 ցուցանիշներ, որոնցով գնահատվում են պետության քաղաքականությունը և գործողությունները, որոնք իրականացվել են երեխայի ավելի արդյունավետ պաշտպանության համար: Ցուցանիշները չորս հիմնական աղբյուրներից են:

Ցուցանիշների առաջին շարքը քանակական տվյալներից է բխում, որով գնահատվում է յուրաքանչյուր երկրում երեխայի պաշտպանության վիճակը: Օրինակ՝ մեկ ցուցանիշը գնահատում է ամեն տարի հաստատություններում 0-2 տարեկան երեխաների թիվը (100.000 բնակչության հաշվով): Զանազակապես բոլոր ցուցանիշները ներկայացված են հավելվածում: Այս բաժնի համար տվյալները դուրս են բերվում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի TransMoEE տվյալների բազայից, որը լայնորեն օգտագործվող տվյալների աղբյուր է, որով գնահատվում է երեխաների բարեկեցությունը աշխարհում, ինչպես նաև ներկայացված են պաշտոնական վիճակագրական տվյալներ ինը երկրներից յուրաքանչյուրի կողմից:

Ցուցանիշների երկրորդ խումբը բխում է ԵԻԿ-ի 4-րդ հոդվածից: Այս հոդվածով նախատեսվում է, որ **մասնակից** պետությունները կիրառեն պատշաճ բոլոր միջոցառումները կառավարության մոտ առկա գործիքակազմի գործադրմամբ՝ երեխայի պաշտպանությունը երաշխավորելու համար: Ինդեքսով այս դասակարգումը ստացել է երեխայի պաշտպանության համար «կառավարման միջավայր» ձևակերպումը: Կառավարման միջավայրի ցուցանիշի օրինակ է **արդյո՞ք երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության մասին համապարփակ օրենք ընդունվել է:**

Ցուցանիշների երրորդ խումբը օգտագործում է ԵԻԿ-ի երեխայի պաշտպանության առանձին հոդվածներ և սկզբունքներ որպես ընդհանուր հիմք և որակական ցուցանիշների ցանց: Ցուրաքանչյուր հոդվածի պահանջները հասկանալու համար ինդեքսը հիմնվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ուղեցույցի վրա: Ուղեցույցում վերլուծություն է կատարվում ԵԻԿ-ի յուրա-

քանչյուր հոդվածի վերաբերյալ Երեխայի իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումների հիման վրա՝ հաշվի առնելով ավելի քան 300 տարբեր կարծիքներ: Ուղեցույցում ներկայացված են «այո», «ոչ» և «մասամբ կատարված» ստուգաթերթեր յուրաքանչյուր հոդվածի կարևորությունը գնահատելու համար: Ինդեքսն օգտագործում է այս ստուգաթերթերը որպես հիմնական ցուցանիշներ: Որակական ցուցանիշները գնահատվում են «այո», «ոչ» և «մասամբ կատարված» պատասխանների միջոցով, որոնց հիման վրա գնահատվում է ԵԻԿ-ի երեխաների պաշտպանության վերաբերյալ հոդվածների մասով պետության (i) քաղաքականությունը /իրավական շրջանակը, (ii) ծառայությունները, ընթացակարգերը, մեխանիզմները, (iii) կարողությունը, (iv) հաշվետվողականությունը, (v) համակարգումը և համագործակցությունը: Այս հիմնական ցուցանիշներն անհրաժեշտ են արդյունավետ գործող երեխայի պաշտպանության համակարգ ունենալու համար: ԵԻԿ-ի ընտրված հոդվածները վերաբերում են յուրաքանչյուր երեխայի չվնասվելու իրավունքին և խոցելի երեխաների հանդեպ պաշտպանություն և խնամք ցուցաբերելու պետության պարտավորությանը:

Ցուցանիշների չորրորդ խումբը կենտրոնանում է սոցիալական աշխատողներին պետության կողմից ցուցաբերված աջակցությանը: Սոցիալական աշխատանքը կարևոր դերակատարություն ունի հանրային ոլորտում երեխայի պաշտպանության մեխանիզմների կառավարման, ընթացակարգերի և ծառայությունների ապահովման համար՝ ինչպես համայնքային, այնպես էլ մարզային և պետական մակարդակում: Այդ պատճառով ինդեքսն ընդգրկում է ցուցանիշներ սոցիալական աշխատանքի վերաբերյալ՝ հաշվի առնելով այս դերի կարևորությունը:

Տվյալների հավաքում և ստուգում

Ազգային աշխատանքային յուրաքանչյուր խմբում ընդգրկված էին երեխայի պաշտպանության ութ փորձագետներ (որոնցից մեկը նաև համակարգողն էր), որոնցից երկուսը իրավաբաններ էին: Ինդեքսի տվյալների հիմնական վերլուծողի (ինդեքսի համահեղինակներից է) կողմից իրականացվել է դասընթաց աշխատանքային խմբի համար նախքան տվյալներ հավաքելը: Առաջին փուլում երկու փորձագետից բաղկացած ենթախմբի յուրաքանչյուր անդամը առանձին հավաքել է տվյալներ ցուցանիշների չորս բաժիններից որևէ մեկի վերաբերյալ (օգտագործելով հաշվետվություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, վիճակագրական տվյալներ և այլն)՝ հավաստիանալու, որ ինդեքսի յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվել է «այո», «ոչ» և «մասամբ կատարված» պատասխանների միջոցով: Այսպես երկու փորձագետ միևնույն ցուցանիշը ուսումնասիրել է առանձին-առանձին: Այն դեպքում, երբ հասանելի չէին փաստերի վրա հիմնված տվյալները, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներ են իրականացվել, կամ հաշվի է առնվել համապատասխան փորձառություն ունեցող մասնագետների իմացությունը այդ կոնկրետ ոլորտում: Ան-

հատական ուսումնասիրություն և ճշգրտումներ կատարելուց հետո հաշվի են առնվել երկու տարբեր փորձագետների ներկայացրած պատասխանները, համեմատվել են ինդեքսի տվյալների վերլուծաբանի կողմից: Երկու փորձագետների կողմից տարբեր պատասխանների դեպքում լրացուցիչ ուսումնասիրություն է իրականացվել և միջոցներ են ձեռնարկվել տվյալներ ձեռք բերելու ուղղությամբ: Միևնույն ենթախմբում միասին աշխատող երկու փորձագետները միասին քննարկել և վերանայել են փաստերը, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկություն են ձեռք բերել: Յուրաքանչյուր ենթախմբի կողմից համատեղ պատասխանները նորից վերանայվել են ինդեքսի տվյալների վերլուծաբանի կողմից: Երեքից չորս վերանայում է տեղի ունեցել երեքից չորս ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ վերջնական համատեղ պատասխանի հանգեղու համար:

Վերջնական ստուգում է իրականացվել ինդեքսի տվյալների վերլուծաբանի կողմից, նախքան ազգային ինդեքսը վերջնական ընդունելը՝ համակարգողի և փորձագետների աշխատանքային խմբի աջակցությամբ:

Միավորների հաշվարկ

Յուրաքանչյուր որակական ցուցանիշ գնահատվել է «այո», «ոչ» և «մասամբ կատարված» պատասխանների միջոցով: Այս պատասխանները միավորի են վերածվել հետևյալ կերպ՝ «այո» = 1, «ոչ» = 0 և «մասամբ կատարված» = 0,5: Այն դեպքում, երբ մի քանի ենթացուցանիշների արդյունքում գնահատվել է մեկ ցուցանիշը, վերջին հիմնական ցուցանիշը հաշվարկվել է իր ենթացուցանիշների միավորների միջինի հիման վրա (օրինակ՝ $1+0,5+0+1+0,5 = 3:5 = 0,6$):

Քանակական ցուցանիշների դեպքում կիրառվել է հետևյալ բանաձևը՝ $Y = X - X_{min} / X_{max} - X_{min}$, որտեղ Y-ը միավորն է, X-ը՝ համապատասխան երկրի քանակական տվյալը, X_{min} -ը ամենացածր ցուցանիշ ունեցող պետության տվյալն է, և X_{max} -ը՝ ամենաբարձր ցուցանիշ ունեցող պետության տվյալը:

Միջին միավորն է հաշվարկվել ցուցանիշների չորս աղբյուրներից երեքի պարագայում. 1) երեխաների ներկայիս պաշտպանության վիճակը, 2) կառավարման միջավայրը և 3) սոցիալական աշխատանքը: Հիմնական աղբյուրի պարագայում (ԵԻԿ-ի հոդվածների վերլուծությունը երեխայի պաշտպանության համակարգերի մոտեցման հետ մեկտեղ), ԵԻԿ-ի յուրաքանչյուր հոդված և իր ցուցանիշները առանձին են գնահատվում (յուրաքանչյուր հոդվածի համար մեկ միջին միավոր հաշվարկելու համար) և հավասարապես ազդում է ինդեքսի վերջնական միավորի վրա: Այսպիսով, երեխայի պաշտպանության ինդեքսի վերջնական միավորը յուրաքանչյուր երկրի համար հաշվարկվում է որպես երեք աղբյուրներից միջին ցուցանիշ և ԵԻԿ-ի յուրաքանչյուր հոդվածի միջին ցուցանիշը:

¹Համաշխարհային բանկ <http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/COUNTRIES/MENAEXT/EXT/MNAREGTOPGOVERNANCE/0,,contentMDK:20513159-pagePK:34004173-piPK:34003707-theSitePK:497024,00.html>

²«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996թ.

³«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2003թ. և փոփոխվել 2006թ.

⁴ Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողով, ՀՀ-ի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրակացություն, *ընդունվել է հանձնաժողովի կողմից 63-րդ նստաշրջանի ժամանակ (27 մայիսի – 14 հունիսի 2013)*, պարբ. 29

⁵ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ և ԵՄ, *Երեխաների իրավիճակի վերլուծությունը ՀՀ-ում, 2012թ.*, էջ 51

⁶Վարչական իրավաբանական վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 1985թ.

⁷Աշխատանքի պետական տեսչությունը լուծարվել է 2015թ.

⁸ՀՀ քրեական օրենսգիրք, 166-րդ և 132.2-րդ հոդվածներ

⁹ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 12-րդ գլուխ և 207-րդ հոդված

¹⁰«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա և «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» կամընտիր արձանագրությունը, «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիա, «Կիբերհանցագործությունների մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիա և դրան կից կամընտիր արձանագրությունները, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պռնոգրաֆիայի մասին» կամընտիր արձանագրություն, ՀՀ-ի և Արաբական Միացյալ Եմիրությունների միջև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր

¹¹Նույն տեղում

¹²Երեխաների վաճառքը և թրաֆիքինգը քրեորեն պատժելի արարքներ են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 168-րդ հոդվածների համաձայն, ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի և «Մարդուն օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն արգելվում է մարմնի հյուսվածքների և օրգանների վաճառքը

¹³«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման եվ աջակցության մասին», 2014թ.

¹⁴ՀՀ կառավարության որոշումը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին, N1385-Ա, 2008

¹⁵Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ ստեղծելու մասին ՀՀ կառավարության, No. 861-Ա որոշում, 2007

¹⁶«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 1 հոդված, 1993թ., «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 1996թ., «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 6-րդ գլուխ, 13-րդ հոդված, ընդունվել է 2005թ., փոփոխվել 2006թ.

¹⁷ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով՝ ներառական կրթություն իրականացնելու կարգը հաստատելու մասին, N 1281-Ն, 2010թ., «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 13-րդ և

14-րդ հոդվածներ

¹⁸«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 22-րդ հոդված

¹⁹2012թ.-ի Հայաստանի Հանրապետության հաշվետվությանը այլընտրանքային զեկույց՝ կազմված Հաշմանդամության հարցերով կոալիցիայի կողմից՝ Հաշմանդամությունը ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովին ներկայացնելու համար, պարբ. 59-60

²⁰ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից Դպրոցահասակ երեխաների և դեռահասների համար առողջապահական ծառայությունների զարգացումը, տարբերակներ և հնարավորություններ, 2010թ., Աշխատանքի և սոցիալական հարցերի ՀՀ նախարարություն և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ՝ «Խոսքը ներառման մասին է. հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում», 2012թ.

²¹Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, «Խոսքը ներառման մասին է», էջ. 15, 2012թ., Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովին ներկայացված այլընտրանքային զեկույց, էջ 45, 2013թ.

²²Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, «Խոսքը ներառման մասին է...», էջ 51, 2012թ.

²³«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, (ուժի մեջ չէ՝ 01.01.2015թ.-ից)

²⁴«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 2001թ.

²⁵Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրություն, 21-26-րդ հոդվածներ

²⁶Ընտանեկան օրենսգիրք, 44-րդ հոդված, 2004թ.

²⁷Ընտանեկան օրենսգիրք, 42-րդ և 54-րդ հոդվածներ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված

²⁸Ընտանեկան օրենսգիրք, 65-րդ հոդված

²⁹Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, 24-րդ հոդված, «Անանց ծնողական խնամքի մատչելի երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2002թ., Ընտանեկան օրենսգիրք, գլուխ 6, Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին որոշում, 164-Ն, 2011թ.

³⁰«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդված

³¹ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական 2013-2016թթ. ծրագիր, N 1694-Ն, 2012թ.

³²«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, ՀՀ ընտանեկան օրենսգիրք

³³«Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշում, հոդված 4, երկրորդ չափորոշիչ, 2004թ.

³⁴ՀՀ-ում որդեգրման իրավիճակի վերլուծություն, 2014թ., <http://amiur.am/175488/>

³⁵ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 07-Ն և 66-Ն համատեղ հրամանը, 2010թ., կետ 8.8

